

## **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՆԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ Գագիկ Տերտերյան**

Ցեղասպանության եւ այդ առիթով՝ ՀՀ-ի շուրջ ընթացող գործընթաց-ներն այս տարի չափազանց քաղաքականացված էին: Առանձնապես ուշագրավ է այդ հարցի շուրջ ԱՄՆ վարած դիվանագիտությունը: Այն սկսվեց Էլիզաբեթ Ջոնսի հայտնի կոշտ հայտարարությամբ: Նկատենք, որ Ջոնսի խոսքերը վերջերս բառացիորեն կրկնել է Ուսւաստանում ԱՄՆ դեսպան Ալեքսանդր Վերշբոուն՝ Մոսկվայի պետական համալսարանի ուսանողների հետ հանդիպման ժամանակ: Այսինքն՝ որեւէ թյուրիմացության մասին խոսք լինել չի կարող, եւ այդ հայտարարությունները կատարվել են Պետդեպարտամենտի համապատասխան որոշման հիման վրա: Ցետեւելով նույն հակահայկական տրամաբանությանը՝ ամերիկյան մամուլում հայտնվեց Ռոբերտ Սորիանիի հոդվածը, որը հայտնի «Caspian Energy Consulting» ընկերության նախագահն է եւ ներկոնսերվատորներին ենթարկվող «Գոյություն ունեցող վտանգի կոմիտեի» անդամ: Դրան հետեւեց Արթուր Սոլյոնինյանի գենքի մաքսանենգության հետ կապված գործը, որը Պետդեպարտամենտի եւ Սորիանիի տեսական մեղադրանքների փաստացի ապացույցը պետք է հանդիսանար: Հատկանշական է, որ ԱՄՆ հակահետախուզության նոր դոկտորինայի համատեքստում՝ Սոլյոննյանի գործը առաջին համրային հնչողությամբ փորձարկումն էր:

Այս ամենին գուգահեռ, դեռ վաղ գարնանը ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսը Լոս Անջելեսում հայտարարեց, որ 1915թ. կատարվածը ցեղասպանություն էր: Նրան հետեւեց ԱՄՆ նախկին դեսպան Գիլմորը, որը հաստատեց էվանսի խոսքերը: Մի փոքր առաջխաղացում նկատվեց նաեւ նախագահ Բուշի այս տարվա ապրիլի 24-ի ավանդական ուղերձում, որտեղ նա մասնավորապես հայտարարեց, թե 1915թ. դեպքերը «հայերը Մեծ եղեռն են անվանում» (իիշենք, որ ծեւակերպումների առումով ամենամեծ առաջխաղացումն իրագործել է Ռուսական Ռեյֆանը): Սակայն այս շարքում ամենակարեւորը Լեհաստանի Սեյմի՝ Ցեղասպանության վերաբերյալ ընդունած հայտարարությունն էր եւ այդ երկրի նախկին նախագահ Լեխ Վալենսայի այցը Հայաստան: Հայտնի է, որ ամերիկյան ազդեցության տակ գտնվող Լեհաստանը ԱՄՆ եւ ատլանտյան կառույցների կողմից «վարում» է ՀՀ գործերը: Ի լրումն, Լեհաստանն ավանդաբար ունի հակառակ եւ թուրքամետ կողմնորոշում, ինչն այդ երկրում ծեւավորվել է ի

հեճուկս ռուսական քաղաքականության, դեռեւ 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների ժամանակաշրջանում: Այսինքն՝ ամեն ինչ վկայում է այն մասին, թե Լեհաստանի հայտարարությունը ԱՄՆ եւ Թուրքիայի հետ մշակված գործողություն էր՝ այստեղից բխող հետեւանքներով:

Այսպիսով, տպավորություն է ձեւավորվում, թե ամերիկացիները ՀՀ-ի եւ հայության նկատմամբ վարում են «սարք» եւ «տաք» ցնցուղի քաղաքականություն: Կարծես թե վերոհիշյալ բոլոր քայլերը մի ամբողջություն են կազմում եւ արտահայտում են ԱՄՆ քաղաքականության էությունը Թուրքիայի եւ Հայաստանի նկատմամբ:

Սակայն պետք է հաշվի առնել նաեւ մեկ այլ հանգամանք: Վերջին ժամանակահատվածում ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ ամերիկյան ընտրանու շարքերում տարածայնություններ են առաջացել: Դա պայմանավորված է Իրաքի եւ Իրանի հարցում ԱՄՆ ունեցած փաստացի անհաջողություններով, ինչպես նաեւ՝ Պետդեպարտամենտի ապարատի հետ Քոնդոլիզա Ռայսի ունեցած հակասություններով: Վերջին հանգամանքը, համաձայն մամուլի իրապարակած լուրերի, արտահայտվել է նաեւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Եվանսի եւ Ռայսի հարաբերություններում:

Բոլոր դեպքերում հարկ է նշել, որ հակաահարեկչական պատերազմի սկսումից հետո, համաձայն մամուլում հայտնված տեղեկատվական արտահոսքերի, ԱՄՆ-ը մեկ անգամ չէ, որ օգտագործել է Ցեղասպանության խնդիրը Թուրքիայի հետ տարվող բանակցություններում: Նախկինում ԱՄՆ-ի համար կարեւոր էր ստիպել Թուրքիային, որպեսզի վերջինս Իրաքի հարցում ընդունի ամերիկյան շահերին համապատասխան դիրքորոշում, այլ պարագայում ԱՄՆ-ը սպառնում էր, ինարավոր այլ քայլերի հետ մեկտեղ, ընդունել նաեւ հայերի Ցեղասպանությունը:

Ներկայում թուրք-ամերիկյան հարաբերություններում նոր խնդիր է ավելացել՝ Թուրքիայի արեւելյան հարեւան Իրանի հարցը: Համաձայն միջազգային լրահոսքի, ներկայում այդ խնդիրի շուրջ լարված բանակցություններ են ընթանում ԱՄՆ եւ Թուրքիայի միջև: Վերջինս չի բաժանում ԱՄՆ հարձակողական քաղաքականությունը Իրանի նկատմամբ եւ այդ հարցում զանազան նախապայմաններ է դնում ԱՄՆ-ի առջև: Այս առիթով շեշտենք, որ ԱՄՆ-ը ամենեւին չի իրաժարվել Իրանի նկատմամբ իր հարձակողական պլաններից, ինչի մասին, մասնավորապես, վկայում են նաեւ ամերիկյան լրատվամիջոցները:

Թերեւս, հենց Իրանի խնդիրն է, որ ստիպում է ԱՄՆ-ին ավելի ակտիվ լինել Հայաստանի հարցում, որովհետեւ ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն նույնպես դարձել են կարեւոր գործոններ ԱՄՆ-իրան հիմնախնդրում: Նկատենք, որ վարելով նման քաղաքականություն Թուրքիայի եւ ՀՀ-ի նկատմամբ՝ ԱՄՆ-ը փորձում է նաեւ միջնորդ-կարգավորողի դեր ստանձնել Թուրքիայի եւ ՀՀ-

ի միջեւ եղած հարաբերություններում եւ այդպիսով վերահսկել քաղաքական զարգացումները:

Սակայն թվում է, թե թուրքերն ընթանել են ամերիկյան մարտավարությունը եւ փորձում են խլել նախաձեռնությունն ամերիկացիներից: Դրա մասին է մասնավորապես վկայում Էրդողանի նամակը ՀՀ նախագահին, որում, սակայն, դատելով մամուլի հրապարակումներից, կառուցողական առաջարկություններ չեն պարունակվում: Բնականաբար, թուրքական նախաձեռնությանն ամերիկացիները խանդով են մոտենում, ինչի մասին է վկայում նաև որոշ ամերիկահայերի հայտնած այն միտքը, թե պետք է խուսափել թուրքական առաջարկներից եւ ընդունել ամերիկյան խաղը:

Այս պարագայում ՀՀ արտաքին քաղաքականության պատասխանատումները պետք է հստակ ընթանեն ԱՄՆ-Թուրքիա մարտավարության տրամաբանությունը եւ փորձեն հավասարակշռել այդ երկրների նախաձեռնությունները Եվրամիության եւ, առաջին հերթին, Ֆրանսիայի միջոցով: Վերջինիս կոշտ դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ պայմանավորված է իր Եվրակենտրոն եւ հակաատլանտյան քաղաքականությամբ, համաձայն որի՝ Թուրքիայի անդամակցությունը Եվրոպական ընտանիքին ձեռնտու է անգլոսաքսերին եւ, ի վերջո, հանգեցնելու է ԵՄ փլուզմանը:

Անփոփելով՝ կարելի է ամրագրել, որ չնայած որոշակի առաջխաղացումներին, Ցեղասպանության քաղաքական գործոնը Հայաստանին եւ հայությանը դեռեւս շոշափելի արդյունքներ չի տվել: Միաժամանակ, կա խիստ անհրաժեշտություն՝ համահայկականորեն հետեւելու Ցեղասպանության խնդրի շուրջ ընթացող միջազգային գործընթացներին, ինարավորինս կոորդինացնելու պետության, Ցայ դատի գրասենյակների, տարաբնույթ կազմակերպությունների եւ անհատների գործունեությունը, որպեսզի կարողանանք արդյունավետ օգտագործել երբեմն առաջացող քաղաքական նպաստավոր հնարավորությունները:

## **ԱԴՐԲԵԶԱՆԸ ԽՈՐՃՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱԶ Մարգիս Դարությունյան**

Թեեւ Արցախի հարցի շուրջ վերջին շրջանում հայ-ադրբեզանական բանակցությունների ակտիվացմանը եւ պաշտոնական Բաքվի բավականին կոչտ հայտարարություններին, թերեւս, սխալված չենք լինի, եթե նշենք, որ ներկայում Արցախյան հարցը իլիամ Ալիեւի վարչակարգի համար կրում է երկրորդական բնույթ՝ հանդիսանալով ավելի բազմատարր մի գործընթացի բաղկացուցիչ մաս:

Այսօր Ալիեւ-Լրտսերի եւ Ադրբեզանի քաղաքական ողջ վերնախավի համար առաջնային նշանակություն ունեն սույն թվականի նոյեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրությունները: Միգուցե ամենաակնհայտ հետեւությունը, որն այսօր կարելի է անել, այն է, որ այդ ընտրություններից հետո, ամենայն հավանականությամբ, զգալի փոփոխություններ տեղի կունենան Ադրբեզանում՝ իրենց ազդեցությունը թողնելով այդ երկրի ներքին իրավիճակի, արտաքին քաղաքականության եւ անզամ հարավսկվասյան զարգացումների վրա:

### **Ներքաղաքական իրավիճակը**

2003թ. հոկտեմբերի նախագահական ընտրություններից հետո ներքաղաքական իրադրությունն Ադրբեզանում ձեռք բերեց հարաբերական կայունություն: Գլխավոր պատճառն ընտրություններում ընդդիմության փաստացի պարտությունն էր: Ընդդիմադիր դաշտի հիմնական թեկնածու համարվող «Մուսավաթ» կուսակցության նախագահ Խսա Ղանբարի անկարողությունը՝ տեր կանգնել իրեն տրված քվեներին, ինչպես նաև ընդդիմադիր ուժերի շրջանում լայնածավալ ձերբակալությունները ընդդիմադիր հիմնական կուսակցություններին զգալիորեն հեղինակագրկեցին ադրբեզանական հասարակության աչքում, որը, արեւելյան որոշ հասարակություններին բնորոշ հանգամանքների բերումով, շատ հաճախ ուժը վեր է դասում իրավունքից:

Ըստ էության, 2003թ. ադրբեզանական ընդդիմությունը եզրափակեց շոշափելի կորուստներով, եւ այդ իրավիճակն իներցիայով շարունակվեց նաեւ 2004թ.:

Որպես իրավիճակի փոփոխության առաջին նշան, թերեւս, կարելի է դիտարկել ընդդիմադիր դաշտում առաջնորդի փոխարինման գործընթա-

ցը, որը մոտավորապես սկսվեց 2004թ. վերջերին՝ Ենթատեքստ ունենալով այս տարվա նոյեմբերին Աղրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները: Խոսքը վերաբերում է Խամ Ղամբարի եւ «Աղրբեջանի ազգային ճակատ. բարեփոխականներ» կուսակցության (ԱԱԲԿ) նախագահ Ալի Քերիմլիի դաշինքին: Ի.Ղամբարի քաղաքական հեղինակության անկանան եւ ավելի պասիվ դիրքորոշման անցնելու համատեքստում սկսեց աստիճանաբար ուրվագծվել Ա.Քերիմլիի ակտիվ գործունեությունը:

Այդ առումով 2005թ., թերեւս, կարելի է շրջադարձային համարել: Յատկանշական է, որ ս.թ. փետրվարին ԱԱԲԿ նախագահը մոտ երկու շաբաթ գտնվում էր Արեւադայան Եվրոպայում (Շվեյցարիա, Նորվեգիա, Ֆրանսիա) եւ ԱՄՆ-ում, ուր հանդիպումներ ունեցավ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան Ֆրանսուա Տերալոմի, Ֆրանսիական ԱԳՆ Վերլուծության եւ կանխատեսման վարչության աշխատակիցների, ԱՄՆ պետքարտուղարի համաշխարհային հարցերով տեղակալ Պաուլա Դոբրինսկու, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ եւ Կասպիցի հարցերով ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվեն Մանի, ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի Եվրասիական բաժնի պետ Սեթ Բրայնլի, ինչպես նաև ամերիկյան քաղաքականության մեջ որոշակի ազդեցություն ունեցող հաստատությունների՝ Վաշինգտոնում գտնվող ժողովրդավարության ազգային ինստիտուտի եւ Յանրապետականների միջազգային ինստիտուտի ներկայացուցիչների հետ:

Ուշագրավ է, որ ավելի ուշ՝ այս ապրիլի վերջերին, Ա.Քերիմլին կրկնեց իր արտասահմանյան այցելությունները՝ այս անգամ ժամանելով Գերմանիա: Բեռլինում նա հանդիպումներ ունեցավ իշխող Սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոխնախագահ Յերլուտ Երերի, որը հայտնի է միջազգային-քաղաքական հարցերի վերաբերյալ կուսակցությունում կայացվող որոշումների վրա իր ազդեցությամբ, Գերմանիայի Կանաչների կուսակցության միջազգային հարցերի գծով փոխնախագահ Ֆրից Կունցի (կուսակցության նախագահն է Գերմանիայի արտգործնախարար Յոզեֆ Ֆիշերը), գերմանական ԱԳՆ Յարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար Ռոլֆ Շելսի եւ այլոց հետ:

Եվ պատահականություն չէ, որ ԱԱԲԿ նախագահի արտասահմանյան այցերից հետո, ս.թ. մարտի 18-ին աղրբեջանական ընդդիմության հիմնական կուսակցություններից «Մուսավաթ»-ը, Ղեմոկրատական կուսակցությունը եւ ԱԱԲԿ-ն ստորագրեցին համաձայնագիր նախընտրական ընդդիմադիր դաշինքի («Ուղուր») ձեւավորման վերաբերյալ:

Ուշագրավ է, որ «Ուղուր» դաշինքի կազմից դուրս մնաց աղրբեջանական մյուս խոշոր ընդդիմադիր ուժը՝ «Աղրբեջանի ազգային անկախություն» կուսակցությունը (ԱԱԱԿ), որի առաջնորդ Էթիբար Մամեդովի

գլխավորությամբ ս.թ. ապրիլի 12-ին տեղի ունեցավ ընդիմադիր մյուս՝ «Յենի սիյասեթ» դաշինքի ստեղծման վերաբերյալ փաստաթղթի ստորագրումը (ԱԱՍԿ առաջնորդից զատ, փաստաթուղթը ստորագրեցին «Ազգային միասնության շարժման» ղեկավար Լ.Շովքերը, «Դանուն Ադրբեյչանի» հասարակական ֆորումի նախագահ Է.Նամազովը, «Ժողովրդավար մտավորականության միության» ղեկավար Ա.Մասհմին և «Մտավորականության միության» նախագահ Է.Գուլիելմը): Յարկ է առանձնացնել այն հանգամանքը, որ ապրիլի վերջին հայտնի դարձավ, թե Ադրբեյչանի նախկին նախագահ Այազ Մութալիբովը հայտարարել է «Յենի սիյասեթին» իր միանալու մասին:

Մարտի վերջին տեղի ունեցավ նաեւ Ադրբեյչանի իշխող «Յենի Ազերբայջան» կուսակցության (նախագահն է Իլհամ Ալիելը) երրորդ համագումարը. չնայած լուրեր էին պտտվում, թե Ալիել-կրտսերը մտադիր է «քարնացնել» կուսակցությունը երիտասարդ կադրերով, սակայն, ըստ լուրյան, իրավիճակը մնաց նույնը:

### **Փոփոխություններ ուժային կառույցներում**

Ինչպես հայտնի է, 2005-ը Ադրբեյչանի համար սկսվեց բանակում բարձրաստիճան մի շարք սպաների ձերբակալությունների վերաբերյալ տեղեկությունով, իսկ մինչ այդ՝ 2004թ. ընթացքում շոշափելի կադրային փոփոխություններ գրանցվեցին ադրբեյչանական հատուկ ծառայություններում, առաջին հերթին՝ Ազգային անվտանգության նախարարությունում (ԱԱՆ): Ս.թ. մարտին այդ փոփոխությունները հասան նաեւ Ներքին գործերի նախարարություն:

Մարտի 10-ին Ադրբեյչանի ԱԱՆ հատուկ գործողության շնորհիվ, գլխավորապես Բաքվում, վնասազերծվեց հանցավոր մի խումբ, որի անդամներից էին ադրբեյչանական ՆԳՆ բարձրաստիճան մի շարք սպաներ՝ ՆԳՆ քրեական հետախուզության վարչության գնդապետ Յ.Մամեդբեկովի գլխավորությամբ: Զերբակալություններից մոտ երկու շաբաթ անց՝ մեկ օրվա ընթացքում պաշտոնանկ արվեցին Ադրբեյչանի ՆԳՆ առաջին փոխնախարար Զ.Դունյամալիելը, քրեական հետախուզության վարչության պետ Զ.Նասիրովը (ինչպես նաեւ նրա երկու տեղակալները), թմրադեղերի առքուվաճառքի դեմ պայքարի վարչության պետ Ն.Խալիլովը, ներքին անվտանգության վարչության պետի տեղակալ Ք.Սադրադինովը եւ Բաքու քաղաքի ոստիկանության գլխավոր վարչության պետի օպերատիվ-հետախուզական հարցերի գծով տեղակալ Զ.Սուլթանովը:

Մարտի 19-ին Իլհամ Ալիելի հրամանագրով Ս.Դասանովան ազատվեց Ադրբեյչանի Գերագույն դատարանի նախագահի պաշտոնից, նրա փոխարեն այդ պաշտոնին նշանակվեց Ադրբեյչանի գլխավոր դատախազի

այլեւս նախկին առաջին տեղակալ Ռ.Ռզաեւը: Նույն օրը՝ մարտի 19-ին Իլիամ Ալիեւի ստորագրած մեկ այլ իրամանագրով Ադրբեջանի Վերաքննիչ դատարանի նախագահ Գ.Ռզաեւը ազատվեց զբաղեցրած պաշտոնից:

Եվ Վերջապես, ս.թ. ապրիլի 26-ին Ադրբեջանի խորհրդարանում կայացած քվեարկության արդյունքում՝ Երկոր գլխավոր դատախազի պաշտոնում իինագ տարի ժամկետով վերընտրվեց Զ.Գարալովը:

### **Արտաքին քաղաքականություն**

Պետք է ասել, որ 2005թ. առաջին հինգ ամիսների ընթացքում ամենից ուշագրավ հատվածը Ադրբեջանի հարաբերություններն էին արտաքին աշխարհի հետ: Տարեսկզբին ռուս-ադրբեջանական եւ իրանա-ադրբեջանական հարաբերություններում գրանցված գործընթացներին եկան գումարվելու որոշ զարգացումներ ամերիկա-ադրբեջանական եւ ընդհանրապես՝ Արևմուտք-Ադրբեջան հարաբերություններուն:

Հարկ է նշել, որ ռուս-ադրբեջանական եւ իրանա-ադրբեջանական հարաբերություններում հատկապես միջին շերտի պաշտոնյաների շփման ակտիվացում գրանցվել էր դեռեւ 2004թ. վերջերին, ինչը, բնականաբար, կարող էր վկայել միայն հավանական նոր զարգացումների մասին:

2005թ. հունվարի 24-26-ը տեղի ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիեւի պաշտոնական այցն Իրան: Թեհրանում Ալիեւ-կրտսերը հանդիպումներ ունեցավ իսլամական հանրապետության բարձրագույն ղեկավարության հետ: Բացի այդ, իրանա-ադրբեջանական հարաբերությունների պատմության ողջ ընթացքում առաջին անգամ, Ադրբեջանի նախագահն այցելեց «Հարավային Ադրբեջանի մայրաքաղաք» Թավրիզ: Հատկանշական է, որ Ալիեւի այցի ժամանակ պաշտոնական Թեհրանը՝ հանձին նախագահ Մուհամադ Խարամիի, ճիշտ է՝ որոշակի վերապահումով, սակայն հայտարարեց Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման մասին: Ուշագրավ մյուս հանգամանքներից կարելի է առանձնացնել այն, որ լուծվեց Թավրիզում Ադրբեջանի հյուպատոսության բացման հարցը, ինչպես նաև Թավրիզի ու Բաքվի միջեւ հաստատվեց օդային ուղիղ կապ:

Ս.թ. փետրվարի 16-ին Իլիամ Ալիեւը աշխատանքային այց կատարեց Մուսկվա՝ Ռուսաստանում Ադրբեջանի տարվա բացման արարողությանը մասնակցելու համար: Ուշագրավ է, որ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման ժամանակ վերջինս գոհունակությամբ արձանագրել էր, թե 2003թ. համենատ 2004թ. ընթացքում Ռուսաստան-Ադրբեջան առեւտրաշրջանառությունն աճել է 50%-ով՝ (մոտ \$800 մլն)՝ հույս հայտնելով, որ այն կիասնի \$1 մլրդ-ի:

Ուշադրության էր արժանի նաեւ ապրիլի 7-ին Բաքու ժամանած Ռուսաստանի նախկին նախագահի Բորիս Ելցինի այցի փաստը: Ելցինը Աղրբեջանում մնաց չորս օր եւ հանդիպումներ ունեցավ Իլհամ Ալիեւի ու Վարչապետ Արթուր Ռասիզադեի հետ:

Եվ վերջապես, որպես ռուս-ադրբեջանա-իրանական շփումների տրամաբանական արդյունք՝ պետք է հատուկ առանձնացնել վերջերս սկսված Մոսկվա-Բաքու-Թեհրան երկաթգծի Ռեշտ (Իրան)-Աստարա (Աղրբեջան) հատվածի շինարարությունը:

Մյուս կողմից, անշուշտ, պետք է նշել ապրիլի 12-13-ը ԱՍՍ պաշտպանության նախարար Դինալդ Ռամսֆելդի Բաքու կատարած եւ ՎՈՒՍ անդամ երկրների գագաթնողովին մասնակցելու համար՝ ապրիլի 21-22-ը Մոլդովայի մայրաքաղաք Քիշնև Իլհամ Ալիեւի այցերը: Ռամսֆելդը Բաքում մնաց ընդամենը մեկ գիշեր եւ քաղաքի «Բիշնա» օդանավակայանում հանդիպումներ ունեցավ Աղրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Արիեւի եւ վարչապետ Արթուր Ռասիզադեի հետ: Դատկանշական է, որ ԱՍՍ պաշտպանության նախարարին Իլհամ Ալիեւը չիանդիպեց՝ Ռամսֆելդի ժամանումից ընդամենը մի քանի ժամ առաջ պաշտոնական այցով մեկնելով Պակիստան:

### Ամփոփում

2005թ. նոյեմբերյան խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ զգալիորեն ակտիվացել է Աղրբեջանի քաղաքական դաշտը: Ներկայիս ադրբեջանական ներքաղաքական իրադրության կարեւոր առանձնահատկությունն այն է, որ ընդդիմադիր ամենալուրջ ուժը՝ «Ռուզուր» նախընտրական դաշինքը, շոշափելի քաղաքական, բարոյական, դիվանագիտական եւ ֆինանսական աջակցություն է ստանում ԱՍՍ ու Եվրամիության ենթակայության ներքո գտնվող կառույցներից՝ նպատակ ունենալով ընտրություններին հասնել առավելագույնի: Ըստ ամենայնի, Իլհամ Ալիեւի վարչակարգն այսօր «Ռուզուր» դիտարկում է որպես սեփական անվտանգությանն ուղղված ներքաղաքական, թերեւս, ամենալուրջ սպառնալիք:

Մյուս կողմից, Ալիեւ-կրտսերը խնդիր ունի վճռական հաղթանակ տանել նոյեմբերյան խորհրդարանական ընտրություններում եւ այդ ընտրություններից իր վարչակարգը դուրս բերել հնարավորինս քիչ կորուստներով:

Ակնհայտ է, որ Վրաստանում, Ուկրաինայում եւ Ղրղզստանում տեղի ունեցած իրադարձություններն իրենց ազդեցությունն են թողել ինչպես աղրբեջանական ողջ վերնախավի, այնպես էլ, մասնավորապես, Իլհամ Ալիեւի անմիջական շրջապատի վրա: Գլխավորապես այդ համատեքստում պետք է բացատրել անցած շուրջ մեկ տարվա ընթացքում

Ալիեւ-կրտսերի՝ Աղրբեջանի ուժային կառույցներում իրականացրած փոփոխությունները, որոնք շատ հավանական է՝ նոր թափ ստանան ընտրություններից հետո:

«Գունավոր հեղափոխություններն» իրենց ազդեցությունը թողեցին նաեւ Իլիամ Ալիեւի վարած արտաքին քաղաքականության վրա: Պատահական չէ, որ վերջին մոտ կես տարվա ընթացքում նկատվում էր աղրբեջանա-ռուսական եւ աղրբեջանա-իրանական հարաբերությունների ջերմացում, ինչը, անշուշտ, նպաստավոր էր թե՛ Մոսկվայի, թե՛ Թեհրանի համար, քանի որ Երկուսն էլ խնդիր ունեն խոչընդոտելու ամերիկյան ազդեցության աճին Յարավային Կովկասում եւ Կասպյան ավագանում:

Նաեւ այդ առումով պետք է բացատրել վերջին շրջանում Աղրբեջանում ԱՄՆ դեսպան Ռինո Յարմիշի, British Petroleum ընկերության եւ Աղրբեջանում գործող արեւմտյան մի շարք հաստատությունների դեմ աղրբեջանական իշխանական ու իշխանամետ կառույցների բռնած բացասական դիրքորոշումը:

Իրենց հերթին, ԱՄՆ-ն ու Եվրամիությունն այս նոյեմբերին Աղրբեջանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները դիտարկում են որպես այդ երկուսն, Յարավային Կովկասում եւ նավթով հարուստ Կասպյան ավագանում սեփական ազդեցության տարածման միջոց:

Կաշինգտոնի պարագայում վերոհիշյալին գումարվում է նաեւ իրանական հարցը: Ըստ ամենայնի, 2004թ. վերջին 2005թ. սկզբին պաշտոնական Բաքվի հետ որոշակի խնդիրներ են ծագել՝ կապված Աղրբեջանում ԱՄՆ շարժում գորամիավորումների տեղակայման հարցի հետ, որը հարկավոր է դիտարկել նաեւ որպես վերը նշված աղրբեջանա-ռուսական եւ աղրբեջանա-իրանական հարաբերությունների ջերմացման արդյունք: Ընդհանուր առմանք, հարկ է նույն տրամաբանության ներքո դիտարկել նաեւ Արցախյան խնդիր շուրջ Բաքվի նկատմամբ Վաշինգտոնի կիրառած ճնշումը:

Պետք չէ բացառել, որ արեւմտյան տերությունների եւ, մասնավորապես, ԱՄՆ-ի համար աղրբեջանական ընդդիմությանը (խոսքն առաջին հերթին վերաբերում է «Ուղուր» նախընտրական դաշինքին) աջակցելը հետապնդում է ոչ միայն Իլիամ Ալիեւի վրա ճնշում գործադրելու նպատակ, այլ նաեւ խնդիր ունի լիովին փոխել Աղրբեջանի իշխող վերնախավը՝ Վրաստանի, Ուկրաինայի օրինակներով եւ իշխանության բերել մարդկանց, որոնք Ռուսաստանի հետ կունենան բավականին սահմանափակ առնչություններ (ինչը չի կարելի ասել Մոսկվայում ուսանած եւ երկար տարիներ աշխատած Ալիեւ-կրտսերի մասին), իետեւաբար կվարեն միանշանակ արեւմտամետ քաղաքականություն, օրինակ՝ Իրանի, Կասպիցի, Յյուսիսային Կովկասի հարցերում:

Դարկ է ենթադրել, որ ստեղծված իրավիճակը Մոսկվային եւ Թեհրանին պարզապես ստիպում է ապահովագրել սեփական քաղաքականություններն Աղբեջանում: Այլ կերպ ասած՝ իրադրության գարգացման ցանկացած տարբերակի դեպքում նրանք չեն կարող սահմանափակվել սոսկ Ալիեւ-կրտսերի վարչակարգի աջակցությամբ: Այդ առումով ուշագրավ է Մոսկվայում գտնվող Այազ Մութավիրովի հայտարարությունը «Յենի սիյասեթին» իր միանալու մասին:

Պետք է դիտարկել նաև «Յենի սիյասեթ»-ի համար Ալիեւի վարչակարգ հավանական համագործակցության տարբերակը: Այդ համատեքստում ուշադրության են արժանի «Յենի սիյասեթում» ընդգրկված մարդկանց կենսագրությունները: Օրինակ՝ Էնամազովը եւ Լ.Շովերն անցյալում մաս են կազմել Յեյրար Ալիեւի թիմին՝ առաջինն Աղբեջանի նախագահ Ալիեւ-ավագի քարտուղարության դեկավարն էր, իսկ Լ.Շովերը նույն Ալիեւ-ավագի օրոք զբաղեցրել է Աղբեջանի պետական քարտուղարի պաշտոնը:

Ինչ վերաբերում է իրանական գծին, ապա այդ առումով պետք է առանձնացնել 2004թ. աշնանից Աղբեջանի քաղաքական դաշտում կրկին ակտիվանալու փորձ կատարող հսկամական կուսակցության գործոնը:

### Դետեռություններ

Այսպիսով, կարելի է նշել, որ ստեղծված իրավիճակն այդքան էլ բարենպաստ չէ Ալիեւ-կրտսերի վարչակարգի համար, թեև ներկայում պաշտոնական Բաքուն ԱՍՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի, Թուրքիայի եւ Իրանի նկատմամբ բռնել է համեմատաբար ավելի հավասարակշռված դիրքորոշում:

Մյուս կողմից, ս.թ. հունիսի 17-ին ԼՂՀ-ում կայանալիք խորհրդարանական ընտրությունների ժողովրդավարության չափանիշներով անցկացումը կարող է ել ավելի բարդացնել Իլիամ Ալիեւի վիճակը:

Ստեղծված իրադրության պայմաններում քիչ հավանական է, որ մինչեւ այս ձմեռ պաշտոնական Բաքուն Արցախի հարցի շուրջ փորձի ստանձնել որեւիցե կոնկրետ փոխգիշումային պայմանավորվածություն: Դեռ ավելին, շատ հավանական է, որ առաջիկայում հարցի վերաբերյալ Աղբեջանի պաշտոնական հայտարարությունները կրեն էլ ավելի կոշտ բնույթ:

## ԸՆԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Կարեն Վերանյան

### Նախադրյալներ ընդիմության ակտիվացման համար

Վրաստանում Սահակաշվիլու իշխանության գալուց հետո երկրի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման ուղղությամբ շոշափելի արդյունքներ չգրանցվեցին, ինչը լուրջ նախադրյալներ է ստեղծում քաղաքական ընդիմության ակտիվացման համար:

Երկրում իրականացվում է սեփականաշնորհման ակտիվ գործընթաց, որը հանգեցնում է տնտեսական դաշտից տեղական նշանակության ձեռնարկությունների ու ընկերությունների մի մասի դուրսմղմանը, օտարերկրյա՝ գլխավորապես ռուսաստանյան կապիտալի ամրապնդմանը, ինչի արդյունքում նախ՝ ավելանում է գործազուրկների թիվը եւ ապա՝ հասարակության շրջանում խորանում են հակառական տրամադրությունները:

Միաժամանակ, մեծանում է երկրի քաղաքական ու ռազմավարական կախվածությունը Արեւմուտքից, մասնավորապես Միացյալ Նահանգներից. պատահականություն չեն թիվլիսյան ժողովրդական այն խոսակցությունները, թե Սահակաշվիլին, մեղմ ասած, «ամերիկյան մարդ է»: Վերջին ժամանակներս գնալով համալրվում են նրանց շարքերը, ովքեր այնքան ել չեն ողջունում Վրաստանի դեկավարության որդեգրած եվրախնտեգրման ուղին՝ որպես երկրի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը: Բավականին հասունացել է երկրի դեկին համեմատաբար չեզոք եւ առավել ազգայնական քաղաքական գիծ վարող վերնախավին տեսնելու հասարակական պահանջը:

Չեն արդարացվել բնակչության մի ստվար հատվածի հույսերը՝ կապված արխազական ու հարավոսական հակամարտությունների կարգավորման հիմնախնդիրների հետ: 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությունից հետո այս ուղղությամբ էական տեղաշարժեր գրեթե չեն արձանագրվել, ավելին, դրանց հանգուցալուժմանն ուղղված պաշտոնական թրիլիսիի դիվանագիտական ու քաղաքական քայլերը ներկայում մտել են փակուղի:

Վրաստանի վերնախավում 2004թ. կեսերից ակտիվացել էին ներիշխանական հակասությունները Սահակաշվիլու եւ ժվանիայի թիմների միջեւ, իսկ երկրի քաղաքական թատերաբեմից ժվանիայի հեռացման

հետեւանքով նրան կողմնակից հասարակության տարբեր շերտերը դարձան Սահակաշվիլու իշխանության սուր քննադատներ:

Փաստորեն, Վրաստանում ստեղծված են, թերեւս, այն հիմնական նախադրյալները, որոնք անհրաժեշտ են քաղաքական դաշտում ընդունության առավել ներկայացվածության համար: Ինչպես ցույց են տալիս 2005թ. մարտին «Գորբի» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացված հարցման արդյունքները, Վրաստանի հասարակական կարծիքը վերջին ամիսներին կտրուկ փոփոխություններ է կրել. նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կտրուկ նվազել է (84%-ից հասել է 39%-ի) երկրում ընթացող զարգացումներից գոհ բնակիչների թիվը:

### **Ընդդիմադիր դաշտի համառոտ բնութագիր**

Վրաստանի ընդդիմադիր դաշտը գաղափարական ու քաղաքական մոտեցումների տեսանկյունից բազմատար է, որում իսկապես մեծ է ինչպես Միացյալ Նահանգների ու Ռուսաստանի, այնպես էլ ԵՄ գործոնը:

Այն նաև շատ խայտարդես է: Ընդդիմությունում ներկայացված են այնպիսի ուժեր, որոնք աշխատել են Գամսախուրդիայի իշխանության տարիներին (զվարականներ) եւ բավականին արմատական են տրամադրված թե՛ Շեւարդնաձեի եւ թե՛ գործող իշխանությունների նկատմամբ: Ընդդիմադիրների շարքերը համալրում են նաև նախկին նախագահ էղ. Շեւարդնաձեի համախոհները: Առանձին պետք է դիտարկել այն ընդդիմադիր առաջնորդներին, որոնք Սահակաշվիլու հետ միասին կամ Բուրջանաձե – ժողովրդավարներ դաշինքի կազմում ակտիվ մասնակցություն են ունեցել 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությանը, սակայն հետագայուն լրել են իշխանության շարքերը՝ ծագած տարակարծությունների պատճառով:

Ընդդիմության միավորնան հարցում բացասական ազդեցություն են թողնում նաև ընդդիմադիր առաջնորդների անձնական հավակնությունները եւ ընդդիմադիր տարբեր թեւերի համար՝ երկրի զարգացման միասնական տեսլականները:

Վրաստանի ընդդիմության չկայացման եւ անհամախմբվածության եական պատճառներից մեկն էլ գործող իշխանությունների կողմից նրա նկատմամբ որոշակի վերահսկողության իրականացումն է: Վրացական մամուլում մեկ անգամ չեն լուրեր տարածվել առ այն, որ ընդդիմադիր թեւի ակտիվ ներկայացուցիչներից ոմանք գաղտնի համագործակցում են երկրի դեկավարության հետ:

## Ընդդիմության միավորման առաջին լուրջ քայլերը

Սույն թվականի մարտ-ապրիլ ամիսներին ընդդիմության շարքերում որոշակի ակտիվացում նկատվեց: Այս աշխուժացումն ինչ-որ տեղ պայմանավորված էր ԱՄՆ նախագահ Բուշի՝ մայիսի 10-ին Վրաստան կատարած այցելությամբ: Խնդիրն այն է, որ ընդդիմադիր ուժերը եւ հատկապես նրանց արեւմտյան թեւը փորձում էին Բուշի այցելության նախաշեմին երկրում ուժեղացնել հակասահակաշվիլիական դժգոհությունները, բուլացնել գործող իշխանությունների դիրքերը:

Ընդդիմադիր ուժերի միավորման հարցում լուրջ քայլեր, թերեւս, սկսել է ծեռնարկել ոչ խորհրդարանական «Վրաստանի Լեյբորիստական կուսակցությունը»՝ Շալվա Նաբելաշվիլու գլխավորությամբ: Լեյբորիստական կուսակցությունը դասվում է երկրի ազդեցիկ եւ ընդգծված ընդդիմադիր ուժերի շարքին, ունի արտաքին կապերի լայն շրջանակ, հանդիսանում է թե՛ գործող ղեկավարության, թե՛ նախորդ իշխանության ընդդիմադիրը: Լեյբորիստների առաջնորդը քավականին մեծ հեղինակություն է վայելում թե՛ երկրի քաղաքական հարթակում եւ թե՛ հասարակական շրջանակներում: «Գորբի» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացված (2005թ. մարտ) հարցման արդյունքների համաձայն, Վրաստանի ընդդիմադիր դաշտում գործող քաղաքական կուսակցությունների շարքում վարկանիշային ամենաբարձր ցուցանիշներով առանձնացել է Լեյբորիստական կուսակցությունը՝ 7,2%, որին հաջորդում է խորհրդարանական «Նոր աջեր» խմբակցությունը՝ 4,3%: Սոցհարցման արդյունքները պարզել են նաև, որ Վրաստանի նախագահի ենթադրյալ թեկնածուների վարկանիշային ցուցանիշներում Շալվա Նաբելաշվիլին (5,4%) գտնվում է երրորդ սանդղակում՝ Սահակաշվիլուց (38,1%) եւ Բուրջանաձեից (7,1%) հետո:

Վերջին ամիսներին լեյբորիստ առաջնորդը ներքաղաքական դաշտում առանձնացել է գործնական նախաձեռնություններով: 2005թ. ապրիլի 21-ին Լեյբորիստական կուսակցության ներկայացուցիչները նախաձեռնեցին նախագահ Սահակաշվիլու հրաժարականի ու արտահերթ ընտրությունների անցկացման պահանջով ստորագրահավաք:

Նաբելաշվիլին սերտ շփումներ ունի Արեւմուտքում, նաև ռուս-վրացական հարաբերությունների բարելավման կողմնակից է (վրացի քաղաքական գործիչներից ոնանք նրան որակել են նույնիսկ ռուսական հատուկ ծառայությունների գործակալ):

Լեյբորիստ առաջնորդի կերպարը բավականին ընդունելի է մասնավորապես Վաշինգտոնում: Դեռևս 2004թ. դեկտեմբերի 4-ին նա ԱՄՆ

կառավարության հրավերով ու ֆինանսավորմամբ եռօրյա այցելությամբ գտնվում էր Միացյալ Նախանգներում, որտեղ նախատեսվում էին նրա հանդիպումները Սահմանադրության պաշտոնյաների, ինչպես նաև Նիքոլայ Շորգանի կենտրոնների եւ Ռոկֆելերի հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների օրակարգում էին Վրաստանի գործող դեկավարության հասցեին ընդդիմադիր ներկայացուցչի քննադատական մոտեցումների ներկայացումը, նրա շփումների խորացումը ամերիկյան պաշտոնյաների հետ:

Նկատենք, որ ընդդիմադիր առաջնորդի՝ ԱՄՆ կատարած այցելությունը զուգադիպում էր այդ երկիր նախկին վարչապետ Ժվանիայի կատարած այցի հետ, ինչի մասին ընդհանրապես չխոսվեց մամուլում: Դիշենք, որ այդ այցի ընթացքում Վրաստանի նախկին վարչապետը տարբեր երկրների քաղաքական կուսակցություններին եւ առաջնորդներին գործնական աջակցություն ցուցաբերող ամերիկյան «Ազգային ժողովրդավարական ինստիտուտի» կողմից պարգևատրվեց Հարիմանի մոցանակով:

Լեյբորիստական կուսակցության ակտիվ միջամտությամբ գաղափարակից ընդդիմադիր ուժերի միավորման փորձերը հաջողությամբ պսակվեցին 2005թ. մարտի կեսերին, երբ լեյբորիստներն ընդգրկվեցին «Վրաստան, առաջ» (Իրակլի Բաթիաշվիլի) եւ «Ապագայի կառավարություն» (Գիա Մախաշվիլի) հասարակական ընդդիմադիր շարժումների հետ համատեղ ստեղծված խորհրդի կազմում, որի նպատակն էր Վրաստանի խորհրդարանի եւ կառավարության արտահերթ ընտրությունների անցկացումը:

Նորաստենջ «Վրաստան, առաջ» շարժումը (հիմնադրվել է 2004թ. դեկտեմբերին) իր առջեւ խնդիր է դրել լուծել երկրի ներքաղաքական խնդիրները, առկա հակամարտությունները, երկրում զարգացնել ժողովրդավարական եւ ազգային արժեքները, դրանց շուրջ համախնճել հայրենասեր ուժերին: Ի. Բաթիաշվիլին առանձնանում է ընդգծված հակառական հայացքներով, կապեր ունի ԱՄՆ-ում, նախկինում մեկ անգամ չել, որ հանդես է եկել հսրայելի հետ Վրաստանի հարաբերությունների խորացնան օգտին: Դեռեւս 2002թ. դեկտեմբերին հսրայել մեկնած Վրաստանի խորհրդարանական պատվիրակության կազմում ընդգրկված Բաթիաշվիլին (այդ ժամանակ զբաղեցնում էր խորհրդարանի պաշտպանության ու անվտանգության հանձնաժողովի նախագահի պաշտոնը, միաժամանակ հարում «Նոր աջեր» կուսակցությանը) քննեսեթում հսրայելի փոխվարչապետ Նարան Շարանսկու հետ հանդիպման ժամանակ մասնավորապես նշել է. «Մեր կուսակցությունը («Նոր աջեր»-ի մը.) հետեւողականորեն քարոզում է հսրայելի շահերը», «մեր երկիրն ուզում է դառնալ հսրայելի հուսալի դաշնակիցը»:

«Վրաստան, առաջ» շարժման ներկայացուցիչները ԱՄՆ նախագահ Բուշի՝ Վրաստան կատարած այցի նախաշեմին բաց նամակ են ուղարկել վերջինիս, որում բացասական գնահատական են տվել երկրի ներկայիս իրադրությանը՝ վստահություն հայտնելով, որ այցի ընթացքուն ԱՄՆ նախագահը կիանդիայի ոչ միայն երկրի գործող ղեկավարության, այլեւ ընդունության ազդեցիկ ներկայացուցիչների հետ:

Ընդդիմադիր առաջնորդ Գիա Մահսաշվիլու կերպարի հետ կապված նշենք, որ նա բավականին ակտիվ շփումներ ունի Միացյալ Նահանգներում (ուշագրավ է, որ 2004թ. հունիսի սկզբին նա մեկնել էր Միացյալ Նահանգներ՝ մասնակցելու ԱՄՆ նախագահական ընտրություններում նախագահի թեկնածու Զոն Քերիի նախընտրական արշավին): Նրա ղեկավարած ընդդիմադիր «Ապագայի կառավարություն» հասարակական շարժումը մոտակա ժամանակներում մտադիր է ստեղծել երիտասարդ առաջնորդների ուսուցման եւ վերապատրաստման ինստիտուտ: Նախատեսվում է, որ այս նախաձեռնությանը ներգրավվելու են ամերիկյան փորձագետներ:

### Հետեւություններ

Վրաստանի գործող ղեկավարությունը ներկայում վարում է այնպիսի արտաքին քաղաքականություն, ինչի արդյունքում, ի դեմս նրա, ձեւավորվում է արտաքին շահերի կամակատարի հասարակական կարծիք, եւ հասունանում է զուտ վրացական քաղաքական գծի առաջադրման պահանջը:

Բնակչության սոցիալ-տնտեսական կենսապայմանները շարունակում են էապես չտարբերվել նախորդ իշխանությունների օրոք տիրող վիճակից:

Հասարակության տարբեր շերտերում ժամանակի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարն այնքան էլ չի ընդունվում որպես այդպիսին, ինչի արդյունքում զգալիորեն թուլացել է հասարակ քաղաքացիների վստահությունը գործող իշխանությունների նկատմամբ:

Վրաստանի ընդդիմության, հատկապես նրա արեւմտյան թերի համախմբման գործում մասնավորապես զգալի է Շ.Նաթելաշվիլու ավանդը: Ըստ որոշ լրատվամիջոցների հաղորդած տեղեկությունների, ԱՄՆ նախագահի Վրաստան կատարած այցելությունից հետո ընդդիմադիր առաջնորդ Շալվա Նաթելաշվիլին Վրաստանում առկա իրադրության թեմային նվիրված ելույթով հանդես է գալու Միացյալ Նահանգների հեղինակավոր Նիքունի կենտրոնում:

## ԿՐՈՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅՈՒՆ

### Գագիկ Տեր-Դարությունյան

21-րդ դարի գլոբալ քաղաքական գործընթացները պարունակում են բազմաթիվ հանգանանքներ եւ նրբություններ, որոնք էապես բարդացնուն են այդ գործընթացների համարժեք ընկալումը: Խորհրդային տարիներին Կենտրոնում եւ հանրապետություններում գործում էին բազմաթիվ գիտական հաստատություններ, որոնք ուսումնասիրում էին այս կամ այն երկրի պատմությունը, ներկան եւ անհրաժեշտության դեպքում ի վիճակի էին քաղաքական իշխանություններին ու հատուկ ծառայություններին տրամադրել համալիր տեղեկատվություն հետաքրքրող խնդիրների մասին:

Օրինակ, ՀՀ-ն մեկն էր այն հանրապետություններից, որը սպասարկում էր «հարավային ուղղությունը»: ՀՀ-ում հատկապես զարգացում էր ապրել արեւելագիտությունը, ճիշտ է՝ հիմնականում որոշ արեւելյան երկրների պատմության եւ մշակույթի ուսումնասիրության հարթությունում: Միեւնույն ժամանակ ԱՄՆ եւ Եվրոպայի գործնական քաղաքական ուսումնասիրություններով զբաղվում էր հիմնականում Կենտրոնը: Որպես հետեւաճ՝ այսօր ՀՀ քաղաքագետների, վերլուծաբանների եւ անգամ շահագրգիռ գերատեսչությունների մոտ, օրինակ, ԱՄՆ-ի վերաբերյալ պատկերացումները հիմնարար բնույթ չեն կրում: Այդ իսկ պատճառով պետական մարմինները որոշումներ ընդունելիս հաճախ հենվում են ոչ մասնագիտական խորհրդատվությունների վրա: Մինչդեռ ակնհայտ է, որ առանց ընթացական այդ գերտերության գործելակերպի առանձնահատկությունները, այսօր դժվար է ոչ միայն վարել արդյունավետ քաղաքականություն, այլ երբեմն նաև լիարժեք ընկալել կատարվածը:

Վերոհիշյալի համատեքստում, մասնավորապես, առանձին ուսումնասիրության է արժանի Ավետարանական Եկեղեցու գործունեությունը, քանի որ այդ Եկեղեցու ազդեցությունն ամերիկյան աշխարհագաղափարախոսության եւ վարկող քաղաքականության վրա ավելի քան զգալի է: Ամերիկայում հիմնված Ավետարանական Եկեղեցին (որը պատկանում է բողոքական ուղղությանը) ներկայում բուռն զարգացում է ապրում: Եթե 1940թ. կային ընդամենը 4 մլն «ավետարանական» (աշխարհի 560 մլն քրիստոնյաներից), ապա այսօր նրանց թիվը հասնում է 500 մլն-ի՝ ընդհանուր 2 մլրդ քրիստոնյաներից: այսինքն՝ ներկայում ամեն չորրորդ քրիստոնյան պատկանում է Ավետարանական Եկեղեցուն: Ենթադրվում է, որ 2050թ. այդ Եկեղեցուն է հարելու ամեն երկրորդ քրիստոնյան:

Անդրադառնալով ԱՄՍ-ին՝ նկատենք, որ այդ երկրում արդեն այսօր կան մոտ 25 հազար Ավետարանական եկեղեցի, եւ մոտ 80 մլն քաղաքացի հարում են այդ բողոքական ուղղությանը: Այս ուղղությունում առավել քան կարևորում են կալվինական այն յուրօրինակ թեզը, որ մարդիկ պետք է հարուստ լինեն. Եթե մարդն աղքատ է, ապա դա նշանակում է, որ նրա հավատն ամուր չէ եւ նրա մոտ իշխում է «բացասական մտածելակերպը»: Յիշենք նաեւ, որ Ավետարանական եկեղեցու քաղաքական ներգործության կարեւոր ուղղություններից է, այսպես կոչված, «քրիստոնեական սիոնիզմը», համաձայն որի՝ պետք է նպաստել, որպեսզի հրեական պետության վերականգնմանը վերաբերող Յին Կտակարանի բոլոր պատգամներն իրագործվեն: Կարելի է ասել, որ անգլոսաքերի եւ հրեաների քաղաքական մերձեցման խնդրում (իսկ հետեւաբար՝ ԱՄՍ մերձավորարեւելյան քաղաքականությունում) Ավետարանական եկեղեցին ունի ավելի քան լուրջ դերակատարում:

Այդ եկեղեցին ունի մեկ կարեւոր առանձնահատկություն եւս. այն իր քարոզությունը իիմնականում իրականացնում է հեռուստատեսության եւ ռադիոյի միջոցով՝ մարդկանց ներշշման համար կիրառելով հատուկ մշակված հնարքներ: Այսինքն՝ ավետարանական քարոզությունը եւ գործունեությունը ենթադրում են աշխատանք մարդկային լայն զանգվածների հետ, եւ այդ համատեքստում բացատրելի է նրա կարեւոր դերակատարումն ամերիկյան ընտրական գործընթացներում:

Ամերիկյան Ավետարանական եկեղեցու առանձնահատուկ մաս է կազմում, այսպես կոչված, «Վերստին ծնված»-ների ճյուղը, որին հարում է նախագահ Բուշը: Յանաձայն «Վերստին ծնված»-ների դրույթներից մեկի, քրիստոնյան «վերստին ծնվում է» ոչ թե կնունքի, այլ Յիսուսի հետ անմիջական շփման հետեւանքով, ինչը տեղի է ունենում, օրինակ՝ քարոզչի միջնորդությամբ: Յայտնի է, որ Բուշը մինչեւ 40 տարեկանը վարում էր ցով կյանք: Սակայն հանդիպելով ավետարանական քարոզիչ Բիլ Գրեեմի հետ (նա ԱՄՍ ամենահեղինակավոր քարոզիչներից է), որը կատարեց «Քրիստոսի առաքյալի» դերը, Բուշը սկսեց վարել քարոյական կյանք, դարձավ Տեխասի նահանգապետ, իսկ հետո՝ նաեւ ԱՄՍ նախագահ:

Յանաձայն Ավետարանական եկեղեցու տեսակետի, ԱՄՍ-ն ունի փրկչական պարտավորություններ մնացյալ աշխարհի հանդեպ, եւ ներկայում այդ պարտականությունների կատարումը դրված է նախագահ Բուշի վրա:

Նշենք նաեւ, որ Ավետարանական եկեղեցին, շնորհիվ իր պարզության եւ քարոզության ժամանակակից մերոդների կիրառման, կարողանում է հավատափոխ անել անգամ մահմեղականներին. այսօր այդ եկեղեցին բավական ամուր դիրքեր ունի Յորդանանում, Ալժիրում: Այս առումով Ավետարանական եկեղեցին, մասնավորապես, հանդիսանում է մի քաղաքա-

կամ գործիք, որի միջոցով արդյունավետ միսիոներական աշխատանք է կատարվում նոր աշխարհագաղափարախոսական տարածքներ գրավելու նպատակով: Խստ կարեւոր է, որ Ավետարանական Եկեղեցին մեծ թափ է հավաքում նաեւ Լատինական Ամերիկայում, որի բնակչությունն ավանդաբար կաթոլիկ է: Դա լրացուցիչ լարվածություն է նոցնում լատինաամերիկյան երկրների եւ ԱՄՆ-ի միջեւ:

Վերոհիշյալ հանգամանքները պայմանավորում են սուր մրցակցություն Ավետարանական եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ: Կրոնական մոտեցումների տարրերությունը եւ Ավետարանական Եկեղեցու հավակնութությունն իրենց դերակատարումն ունեցան կաթոլիկ հսպանիայի եւ Իտալիայի՝ ԱՄՆ քաղաքականությունից այս կամ այն չափով հեռանալու գործում:

Սարը պատերազմի տարիներին Կաթոլիկ Եկեղեցին, ի դեմս հանգուցյալ Յովիաննես Պողոս Երկրորդ պապի (որի ընտրության գործում վճռորոշ դերակատարում է ունեցել ԿՅՎ-ն), ակտիվորեն համագործակցում էր ԱՄՆ-ի հետ՝ ԽՍՀՄ-ի դեմ պայքարում: Սակայն նոր՝ հակասաբեկշական պատերազմի դարաշրջանում Վատիկանը վերանայեց իր մի քանի քաղաքական դրույթներ, եւ այսօր, օրինակ, Իրաքի խնդրում Կաթոլիկ Եկեղեցին ամենեւին էլ չի բաժանում ամերիկյան մոտեցումները:

Չնայած մի շարք հիմնախնդիրների առկայությանը, զգալիորեն բարելավվել են նաեւ Կաթոլիկ եւ ռուսական Ուղղափառ Եկեղեցիների, ինչպես նաեւ Վատիկանի եւ Կրենլի միջեւ հարաբերությունները: Որպես տրամաբանական շարունակություն նման քաղաքականության՝ այսօր Վատիկանը սկզբունքային դիրքորոշումներ ունի Խրայելի նկատմամբ (կապված հիմնականում Երուսաղեմի քրիստոնեական սրբավայրերի իրավական կարգավիճակի հետ): Պահպանողական աշխարհայացքի տեր նորընտիր Բենեդիկտ 16-րդ պապը, դատելով տեղեկատվություններից, շարունակելու է իր նախորդի ռազմավարությունը: Դա դժգոհություններ է առաջանում Վատիկանի հակառակորդների շրջանում: Օրինակ, տեղեկատվական դաշտը լցվեց հոդվածներով այն նասին, թե նոր պապը մանուկ հասակում եղել է «Յիտլերյուգենդ» կազմակերպության անդամ:

Վերադառնալով Ավետարանական Եկեղեցուն՝ նկատենք, որ այն ներկայացված է նաեւ ՅՅ-ում: Ի դեպ, Յայաստանում միջազգային կազմակերպությունների որոշ ներկայացուցիչներ ակտիվ քարոզում են, թե նոր գլոբալացված աշխարհում հայության արդիականացումը եւ փրկությունը հնարավոր է միայն Ավետարանական Եկեղեցուն հարելու միջոցով: Յատկանշական է, որ նման քարոզչություն ծավալվում է նաեւ հետխորհրդային այլ տարածքներում: Այսինքն՝ այս հարցում առկա է հստակ եւ պետական մակարդակով կազմակերպված աշխարհագաղափարախոսական բնույթի ռազմավարություն:

## ԻՄՐԱՅԵԼԻ ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ Սեւակ Սարուխանյան

Իսրայելի միջուկային գենքի ստեղծման ակունքներին կանգնած է երկրի առաջին վաշչապետ Շ.Բեն-Գուրիոնը, որն, ի դեպ, այն ձեռնարկեց՝ առանց որևէ մասին նույնիսկ իր կարինետի անդամներին տեղեկացնելու, ինչը կոչված էր բացառել համապատասխան տեղեկատվության հոսքն արտասահման՝ մասնավորապես ԽՍՀՄ, որը 1950-ականներին բավականին ջերմ հարաբերություններ ուներ Իսրայելի կառավարության որոշ անդամների հետ:

Միջուկային ռումբի ստեղծման նախագծի իրականացման գործում, բացի Բեն-Գուրիոնից, առանցքային դեր խաղացին քիմիկոս-գիտնական Ե.Բերգմանը եւ Իսրայելի պաշտպանության նախարար Շ.Պերեսը: Դենց այս գերատեսչության հսկողության տակ 1952թ. Իսրայելում ձեւավորվեց միջուկային էներգիայի հանձնաժողովը, որն իր վրա վերցրեց իսրայելական միջուկային գենքի ստեղծման աշխատանքների հիմնական բեռը:

1956թ. Իսրայելը պլուտոնիումային միջուկային ռեակտոր կառուցելու վերաբերյալ գաղտնի համաձայնագիր կնքեց Ֆրանսիայի հետ: Միջուկային հետազոտությունների ոլորտում ֆրանս-իսրայելական համագործակցության հեռանկարները դիտվել են դեռեւս 1940-ականների վերջին: 1949թ. միջուկային ֆիզիկոս, Ֆրանսիայի Միջուկային էներգիայի հանձնաժողովի անդամ Ֆ.Փերինն այցելեց Իսրայել՝ մասնավորապես Վեյցմանի ինստիտուտ, որտեղ 50-ականներին սկսվեցին Իսրայելի միջուկային ծրագրի զարգացման հիմնական նշակումները: Հատկապես Ֆրանսիայի աջակցության շնորհիվ Իսրայելը ձեռնարկեց իր միջուկային գենքի մշակումը, որի ստեղծման եւ միջուկային խաղաղ տեխնոլոգիաների զարգացման նպատակով 1957թ. Դիմոնում (Նեգելի անապատ) հիմք դրվեց միջուկային կենտրոնի շինարարությանը:

Ֆրանսիան, 1956թ. տալով Իսրայելի միջուկային ծրագրի զարգացմանն օժանդակելու համաձայնություն, հետապնդում էր նաեւ որոշակի քաղաքական շահեր. ֆրանսիական կառավարությունը հանդես եկավ Իսրայելի օգտին՝ որպես հակակշիռ արաբական ազգայնականությանը, որը սպառնում էր Աֆրիկայում՝ նախեւառաջ Ալժիրում, Ֆրանսիայի շահերին: Իսրայելը Դիմոնում 26 մվտ հզորությամբ ծանր ջրով աշխատող արդյունաբերական ռեակտոր, ինչպես նաեւ պլուտոնիումի անջատման համար կայանքներ կառուցելու մասին գաղտնի համաձայնագիր կնքեց

Ֆրանսիայի հետ, որն այդ ժամանակ ուներ լավ զարգացած միջուկային ծրագիր (ֆրանսիացի շատ մասնագետներ, որոնք երկրորդ աշխարհամարտի տարիներին աշխատում էին ԱՄՆ-ում եւ Կանադայում, պատերազմից հետո վերադարձան հայրենիք ու մասնակցեցին Ֆրանսիայի ազգային միջուկային ծրագրի կատարելագործմանը): Դիմոնի ռեակտորի հղությունը հետագայում հասցվեց մինչեւ 150 մվտ-ի:

1958թ. ամերիկյան Ու-2 հետախուզական ինքնաթիռներն առաջին անգամ Դիմոնի կենտրոնում շինարարություն ֆիքսեցին, սակայն չպարզեցին կառուցվող օբյեկտի բնույթը:

1960թ. դեկտեմբերին ԿՅՎ-ը ձեռք բերված տեղեկությունների հիման վրա գեկուցեց, թե Դիմոնում գտնվող օբյեկտը միջուկային հետազոտությունների հրականացնող կենտրոն է: Ելեկով դրամից՝ ԱՄՆ պետքարտուղար Ջերթերը դիմեց Միացյալ Նահանգներում հսրայելի դեսպանին, Աերկայացնելով նրան ԿՅՎ տրամադրած տվյալները եւ պահանջեց բացատրություններ տալ Դիմոնում կառուցվող օբյեկտի վերաբերյալ: Միաժամանակ, ԱՄՆ Միջուկային էներգիայի հանձնաժողովի դեկավարը հրապարակավ ընդունեց ԿՅՎ արած բացահայտումները: Դրանից անմիջապես հետո Բեն-Գուրիոնը հսրայելի քննեսետում ելույթի ժամանակ խոստովանեց, որ Դիմոնում կառուցվող օբյեկտը միջուկային ռեակտոր է, սակայն՝ բացառապես խաղաղ բնույթի:

Փաստորեն, ԱՄՆ վարչակազմը դիմոնյան նախագծի մասին իմացել է 50-ականների վերջին, երբ ամերիկյան Ու-2 ինքնաթիռները Նեգելի անապատում ֆիքսել էին միջուկային կենտրոնը, սակայն հսրայելի վրա ոչ մի ճնշում չի գործադրել:

1965թ. ԱՄՆ նախագահ Ջոնսոնը Էմիսարներ ուղարկեց հսրայել՝ այդ երկրի դեկավարությանը համոզելու՝ դիմոնյան ռեակտորը դնել Ատոնային Էներգիայի միջազգային գործակալության (ԱԵՍԳ) վերահսկողության ներքո: Հսրայելը մերժեց ամերիկյան վարչակազմի այս դիմումը. մերժեց այն պատճառով, որ դա դիմում էր, այլ ոչ թե խիստ պահանջ՝ ամրագրված ամերիկյան ռազմատեխնիկական ու տնտեսական օգնության դադարեցման սպառնալիքներով:

Այն, որ ամերիկյան տեսչությունները շատ դեպքերում ձեւական բնույթ էին կրում եւ միջուկային գենքի չտարածնան քաղաքականության վրա ոչ մի էական ազդեցություն չունեցան, վկայում է հետեւյալ փաստը. 1968թ. սկզբին ԿՅՎ փոխտնօրեն Կ.Դեքետը եկավ վերջնական եզրահանգման, թե հսրայելն ունի միջուկային գենքի ստեղծման մանրակրկիտ մշակված ծրագիր: Նման եզրակացության Դեքետը հանգեց ամերիկյան ջրածնային ռումբի հայր Է.Թելերի հետ գրույցի արդյունքում, որը 60-ականներին բազմից այցելել էր հսրայելական միջուկային օբյեկտները: Համաձայն

1974թ. Միջուկային վերահսկողության հանձնաժողովին Դեքտի տված ցուցմունքների, ԿՐՎ տնօրեն Ռ.Ռելմսը հրամայել էր նրան Խրայելի միջուկային ծրագրին վերաբերող սեփական ենթադրությունների մասին չընդարձակվել:

Ինչպես հայտնի է, Խրայելը չի ստորագրել Միջուկային գենքի չտարածման պայմանագիրը, ինչն ԱԵՄԳ կողմից խրայելական ռազմական միջուկային օբյեկտների տեսչական ստուգումները դարձնում է անհնարին: Փաստորեն, այսօր Խրայելի ողջ միջուկային ենթակառուցքը գտնվում է համաշխարհային ընկերակցության հսկողությունից դուրս: Միակ երկիրը, որի ճնշումն Խրայելի վրա կարող է արդյունավետ լինել՝ Միացյալ Նահանգներն է: Սակայն, ինչպես համոզվեցինք, Միացյալ Նահանգներն Խրայելի ռազմական միջուկային ծրագրի վրա պարզապես «աչք է փակել»:

Խրայելը, ինչպես համարվում է, արդեն 1967թ. տիրապետում էր միջուկային գենքի եւ մեկ անգամ չէ ԱՄՍ-ին «միջուկային» շամտաժի ենթարկել: Հանրահայտ է, որ 1973թ. արաբա-խրայելյան հերթական պատերազմի ժամանակ Խրայելն, արաբների դեմ ատոմային ռումբի կիրառման սպառնալիքով, Միացյալ Նահանգներին ստիպեց խրայելական գինվածութերին ռազմական տեխնիկա տրամադրել:

Սեփական միջուկային գենքի ստեղծումից հետո Խրայելն անցավ անորոշության եւ անթափանցության քաղաքականության: Առաջինը ենթադրում է մի համակարգ, երբ պարզ չէ՝ Խրայելն ունի՞ միջուկային գենք, թե՞ չունի, իսկ երկրորդը ենթադրում է պաշտոնապես չհայտարարված ու չընդունված միջուկային գենքի առկայություն: Ավելի ուշ, Խրայելի միջուկային քաղաքականությունն ամրապնդվեց «Բեգինի դոկտրինայով», որը բացառում է նրա արաբական հարեւանների կողմից միջուկային գենք ստեղծելու հնարավորությունը: Տվյալ դոկտրինայի իրագործումը եղավ, մասնավորապես, 1981թ. Խրայելի կողմից Օգիրակի իրաքյան միջուկային կենտրոնի օդային ռմբահարումը:

Ինչ վերաբերում է անթափանցության քաղաքականությանը, ապա այն խարսխված է հետեւյալ սկզբունքների վրա.

1. Խրայելի անվտանգության համար խիստ կարեւոր է միջուկային գենք ունենալը: Այս առօւնով Խրայելը Մերձավոր Արեւելքում պետք է հանդիսանա ոչ ձեւական մենատեր, ինչը ժխտում է նրա արաբական հարեւանների (իսլամական հեղափոխությունից հետո՝ նաեւ Իրանի) կողմից միջուկային գենքի տիրման հնարավորությունը:

2. Խրայելը պաշտոնապես չպետք է ընդունի միջուկային տերության իր կարգավիճակը:

3. Անթափանցությունը նվազեցնում է Խրայելական միջուկային

ծրագրի հրապարակային քննարկումը՝ չդարձնելով այն միջազգային բանավեճի նյութ:

Ինչ վերաբերում է անորոշության քաղաքականությանը, ապա այն խրայելցի միջուկային ֆիզիկոս Մ.Վանունուի 1986թ. մերկացումներից հետո մասնակիորեն կորցրել է արդյունավետությունը: Այս մերկացումները գրեթե բոլորի մոտ ցրեցին այն կասկածները, թե ունի, արդյոք, խրայելը միջուկային գենք:

Խրայելի միջուկային մարտագլխիկների քանակի մասին կարծիքները բազմազան են: Վանունուի տվյալներով, Դիմոնում արտադրվել է 100 միջուկային ռումբի ստեղծմանը բավականացնող պլուտոնիում: Նա նաև հայտարարեց, թե Խրայելը շաբաթական արտադրում էր 1,2 կգ պլուտոնիում, ինչը բավարար է տարեկան 10-12 ռումբ լիցքավորելու համար: Այսինքն՝ Վանունուի ծերբակալությունից հետո անցած 20 տարիների ընթացքում կարող են արտադրված լինել եւս շուրջ 200 միջուկային ռումբ:

## ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Արտակ Շաքարյան

#### Նախապատմություն

1947թ. ՄԱԿ-ում Խսրայել պետության ստեղծման դեմ քվեարկողների շարքում էր նաեւ Թուրքիան: Անկարայի այդ որոշումն ուներ երկու պատճառ. մահմեղական համերաշխություն եւ ապա՝ համոզմունք, որ սինոնիզմն ու կոմոնիզմը նույն բան են, հետեւաբար նոր պետությունը կմիավորի իր ուժերը Խորհրդային Միության հետ՝ Մերձավոր Արևելքում սոցիալիզմ կառուցելու ուղղությամբ: Սակայն արդեն 1949թ. Թուրքիան հետեւեց արեւանտյան երկրների մեջ մասի օրինակին ու առաջինը մահմեղական աշխարհում ճանաչեց Խսրայել պետությունը:

Բաղդադի պակտի փաստացի փլուզումն ու տարածաշրջանում Խորհրդային Միության ազդեցության աճը նպաստեցին թուրք-խսրայելական համագործակցության (գլխավորապես հակաարաբական ենթատեքստով) ձեւավորմանը: Թուրքիայի ու Խսրայելի միջեւ դաշնակցային առաջին կապերը հաստատվեցին 1952թ., երբ սկսեց փոխանակվել հետախուզական տեղեկատվություն: Դրան օժանդակեցին նաեւ տարեցտարի աճող առեւտրի ծավալը եւ ռազմաքաղաքական համատեղ գործողությունները: Երկու երկրների համագործակցությունը, սակայն, գաղտնիության քողի տակ էր հատկապես Մենդերեսի ու Բեն-Գուրիոնի կառավարման տարիներին: Գաղտնիությունը հիմնականում թուրքերի խնդրանքով էր, որպեսզի արաբական աշխարհում չծագեր հակաթուրքական բողոք:

Թուրք-խսրայելական հարաբերությունների առաջին վատթարացումը գրանցվեց 1967թ. Վեցօրյա պատերազմից հետո եւ տեւեց մինչեւ 1980-ական թթ. սկիզբը՝ Թուրքութ Օզալի կառավարումը: Վատթարացումը մեծապես պայմանավորված էր Թուրքիայի՝ դեպի արաբական աշխարհ գնալու եւ դրանով՝ իր դիրքերը Մերձավոր Արեւելքում վերագտնելու ձգտմամբ: Թուրքերը բացահայտորեն աջակցում էին պաղեստինցիներին՝ հույս ունենալով պատասխան ստանալ արաբներից Կիպրոսի հարցում:

Օզալի օրոք Անկարա-Թել Ավիվ հարաբերությունների բարելավման գործում էական դեր խաղացին թուրքական կողմի ձգտումները՝ քաղել տնտեսական օգուտներ եւ օգտագործել խսրայելական կապերը ԱՄՆ-ում: Ի վերջո, 1991թ. հարաբերությունները մտան նոր փուլ. տեղի ունեցավ

դեսպանների փոխանակում, իսկ 1993թ. երկրները ստորագրեցին անվտանգության խնդիրներում համագործակցության վերաբերյալ համաձայնագիր:

ԱՄՆ գործուն աջակցությամբ 1996թ. փետրվարին Թուրքիայի ու Իսրայելի միջեւ կնքվեց ռազմավարական դաշինք. Թել Ավիվում, գաղտնիության պայմաններում, Թուրքիայի Գլխավոր սպայակույտի ներկայացուցչի ու Իսրայելի պաշտպանության նախարարության ղեկավարության կողմից ստորագրվեց առաջին թուրք-իսրայելական ռազմական պայմանագիրը: Նույն՝ 1996թ. օգոստոսին հսրայելի պաշտպանության նախարարության պատվիրակությունն այցելեց Անկարա, որտեղ ստորագրվեց F-4 Phantom տեսակի թուրքական ռազմական 54 ինքնաթիռների արդիականացման վերաբերյալ՝ ընդհանուր առմամբ \$600 մլն-ի պայմանագիր: Բացի այդ, Իսրայելն իր վրա էր վերցնում Իրանի, Իրաքի, Սիրիայի հետ Թուրքիայի սահմանների անվտանգության համակարգերի վերագինումը՝ ուղղված գլխավորապես քուրդ գինյալների դեմ: Նաեւ ձեռք էր բերվել հատուկ մի պայմանավորվածություն հետախուզական տվյալների փոխանակման վերաբերյալ:

Հետագա տարիներին եւս բարձրաստիճան զինվորականների փոխադրձ այցերն ու ռազմական ոլորտի պայմանագրերը միայն ամրապնդում էին երկուստեք կապերը: Այսպես, 1997թ. հոկտեմբերին հսրայելի Գլխավոր սպայակույտի նախագահ Ամնոն Լիպկին-Շաաքը այցելեց Անկարա, որի արդյունքում երկու երկրների միջեւ ռազմական ոլորտի պայմանագրերի թիվն ավելացավ եւս մեկով՝ այս անգամ հրթիռների վերաբերյալ: Յամաձայնություն էր ձեռք բերվել 500 կմ հեռահարություն ունեցող «Ղելիլ» տիպի հրթիռների արտադրության մասին, ինչը կապված էր Յարավային Կիպրոս բերված ռուսական C-300-ների հետ:

Արդյունավետ էին նաեւ տնտեսական հարաբերությունները. բավական է միայն հիշատակել Միջերկրական ծովի հատակով Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ անցկացվելիք ջրի խողովակաշարի նախագիծը:

### **Յարաբերությունները 2003թ. իրաքյան պատերազմի ժամանակահատվածում**

Թուրքիայի 2002թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները մտահոգության տեղիք տվեցին Իսրայելում: Անկարայի նոր իսլամամետ կառավարության հետ քաղաքական փոխընթանում հաստատելու հսրայելի առաջին փորձը կարելի է համարել արտաքին գործերի նախարար Ս.Շալոմի այցը Անկարա 2003թ. ապրիլին: Դրան հաջորդեց Իսրայելի նախագահ Ս.Կացավի այցը՝ նույն տարվա հուլիսին: Այցերը,

սակայն, արդյունք չտվեցին, եւ թուրք-խրայելական հարաբերությունները թեւակոխեցին հակասություններով լի մի ժամանակաշրջան:

2003թ. իրաքյան պատերազմը եւ հատկապես Խորայելի քաղաքականությունը Հյուսիսային Իրաքում՝ Երկու երկրների հարաբերություններում իսկական ճգնաժամի պատճառ հանդիսացան: Թել Ավիվի համագործակցությունը փաստացի անկախ Քրդստանի հետ՝ Անկարան ընկալում էր որպես սպառնալիք սեփական ազգային անվտանգությանը:

Որպես այդ ճգնաժամի արտաքին դրսեւորում՝ կարելի է հիշատակել, որինակ, 2004թ. մարտին «Համաս» կազմակերպության առաջնորդ Ահմեդ Յասինի, իսկ ավելի ուշ՝ նրան փոխարինած Ռանքիսիի սպանությունները, որից հետո Թուրքիայի վարչապետ Էրդողանն անհապաղ այդ ակտերը որակեց «այետական ահարեւէզություն», իսկ Խորայելում Թուրքիայի դեսպանը հետ կանչվեց Անկարա՝ «խորհրդակցության համար»:

2004թ. ապրիլին ծրագրված Խորայելի արդյունաբերության ու առեւտրի նախարարի այցը Թուրքիա հետաձգվեց անորոշ ժամանակով: Պատճառը թուրքական կողմի «անպատրաստվածությունն» էր ընդունել նախարարին. պաշտոնական բացատրությունը՝ Անկարան գերզբաղված էր Կիպրոսի հիմնախնդրով, չնայած նույն օրերին Անկարայում ընդունելության էր արժանանում Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարարը:

## 2005թ. գարգացումները թուրք-խրայելական հարաբերություններում

2005թ. բնորոշվեց թուրք-խրայելական հարաբերություններում գրանցված նոր փոփոխություններով:

2005թ. հունվարին Թուրքիայի արտգործնախարար Գյուլն այցելեց Թել Ավիվ, որտեղ հանդես եկավ սիրիա-խրայելական հակամարտության կարգավորման գործում Թուրքիայի միջնորդության առաջարկով:

Գյուլի այցին հաջորդեց Խորայելի պաշտպանության նախարարության պատվիրակության այցն Անկարա: Քննարկվեց \$1,5 մլրդ արժողությամբ՝ Թուրքիային պատկանող 48 հատ F-5, 54 հատ F-4 մարտական ինքնաթիւների ու 170 հատ M-60 տանկերի արդիականացման պայմանագիրը: Հաջորդ օրն Անկարայում, փակ դրուերի հետեւում, հանդիպեցին Խորայելի Գլխավոր սպայակույտի պետ Մոշե Յաալինն ու Թուրքիայի Գլխավոր սպայակույտի նախագահ Յիլմի Օզքոքը: 2005թ. ապրիլին Թուրքիան Խորայելի հետ \$183 մլն գումարի՝ առանց օդաչուի թռչող 10 հատ Heron տեսակի հետախուզական ինքնաթիւների եւ Elbit օժանդակ համակարգերի ու կայանների գննան պայմանագիր ստորագրեց:

Եվ վերջապես, սույն թվականի մայիսի 1-ին հսրայել այցելեց Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Վերջինս հանդիպումներ ունեցավ հսրայելի նախագահ Մոշե Կացավի, վարչապետ Արիել Շարոնի եւ պաղեստինյան առաջնորդ Մահմուդ Աբասի հետ:

Թուրքիայի վարչապետի այցն հսրայել հիմնականում հարկ է դիտարկել ռազմառեստրային հարաբերությունների վերականգնման տեսանկյունից: Իսրայելի ու Թուրքիայի միջեւ ստորագրվեց F-4 տեսակի 30 հատ մարտական ինքնաթիռների արդիականացման պայմանագիր: Քննարկվեց ռուսական բնական գազն հսրայել տեղափոխելու գործում Թուրքիայի ներգրավման հավանականությունը:

Ըստ որոշ տեղեկությունների, երկու երկրների առաջնորդների համբաման ժամանակ քննարկվել է նաև Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված միջազգային-քաղաքական իրավիճակը: Իսրայելի նախագահ Մոշե Կացավի հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ կիսում է Իսրայելի հետ այն բոլոր մտահոգությունները, որոնք առնչվում են Իրանի միջուկային ծրագրին. «Իրանի միջուկային ծրագիրը սպառնում է ողջ աշխարհին, եւ Իսրայելը թեհրամի միջուկային սպառնալիքներին դեմ հանդիման կանգնած միակ երկիրը չէ»: Դիշեցնենք, որ ս.թ. հունվարին ԱՄՆ պաշտպանության նախարարի խորհրդական Դուգլաս Ֆեյթն Անկարայում ունեցած իր հանդիպումների ժամանակ նախանշեց տարածաշրջանում Թուրքիայի նոր դերերից մեկը՝ «դառնալ տարածաշրջանում միջուկային գեների վերահսկողության նախաձեռնության առաջնորդ»:

### Դետեռություններ

Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ գրանցված վերջին երկու տարիների համեմատաբար լարված ժամանակաշրջանը կարծես թե իր ավարտն է գտնում՝ Մերձավոր Արեւելքում ստեղծված աշխարհաքաղական նոր իրավիճակի եւ թուրք-ամերիկյան նոր պայմանավորվածությունների պատճառով:

Թուրք-իսրայելական հարաբերություններում ԱՄՆ ազդցությունը հանդիսանում է եական գործոն: Օրինակ, ուշագրավ է, որ թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացման շրջանը համընկավ թուրքաներիկյան հարաբերությունների սառը փուլին, իսկ թուրք-ամերիկյան հարաբերությունների ջերմացմանն անմիջապես հաջորդեց ջերմացում նաև թուրք-իսրայելական հարաբերություններում:

Իր հերթին, թուրքական վերնախավը, տարածաշրջանում առավել ակտիվ դերակատարի հայտ ներկայացնելով, թերեւս, ցանկություն ունի

այլընտրանք ստեղծել եվրասերտաճման գործընթացին՝ վերջինիս հավանական խափանման դեպքում առանց ռազմավարական հեռանկարի չմնալու համար: Սա հուշում է, որ Անկարան առաջիկայում էլ ավելի կակտիվացնի իր ջանքերը Մերձավոր Արեւելքում, մասնավորապես՝ կծոտի զարգացնել ու ամրապնդել հարաբերությունները թե՛ հսրայելի, թե՛ արարական աշխարհի հետ՝ ջանալով ստանձնել միջնորդի դեր արարա-հսրայելական հակամարտության կարգավորման գործընթացում:

## **ԱԼ-ԿԱԻԴԱՆ՝ ԶԻՅԱԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ Արաքս Փաշայան**

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ալ-Կաիդայի ոչնչացման համար մեծ միջոցներ են ներդրվել, հատուկ ծառայություններին հաջողվել է օգալի վճար հասցնել նրա ենթակառուցներին, ձերբակալել կամ վերացնել կազմակերպության բարձրաստիճան ղեկավարներից շատերին, սակայն առ այսօր նա պահպանում է իր կենսունակությունը: Ալ-Կաիդայի եւ դրան առնչակից հարցերի թեման շարունակում է տեղ գտնել քաղաքագիտական ուսումնասիրություններում ու մամուլում:

Ալ-Կաիդան ամենատարածված եւ քիչ բացահայտված միջազգային ահաբեկչական կազմակերպություններից է, որը մասնաճյուղեր ունի աշխարհի տարբեր անկյուններում:

Ալ-Կաիդայի եւ նրա առաջնորդ Ուսամա բին Լադենի գործունեությունը սկիզբ է առնում խորհրդա-աֆղանական պատերազմից: Բին Լադենը զգալի մասնակցություն է ունեցել աֆղանական պատերազմին՝ համակարգելով ջիհադի շարժումը, զբաղվելով արաբական երկրներից մոջակիդների Աֆղանստան ներթափանցմամբ, Ֆինանսական եւ ռազմական միջոցների հայթայթմամբ: 1980-ականներին Աֆղանստանում խորհրդայն ներխուժման դեմ ջիհադի քարոզչությունը մեծ ինաստով արդյունք էր վերազգային իսլամական կառուցների (մասնավորապես Իսլամական աշխարհի լիգայի) գործունեության, որոնք աչքի էին ընկնում պահպանողական սալաֆական ուղղվածությամբ (սալաֆականությունը առաջ է քաշում վաղ իսլամի ակունքներին վերադառնալու եւ դրանք անվերապահորեն կատարելու գաղափարը՝ միավորելով իսլամի տարբեր արմատական ուղղությունների, սկսած վահաբականությունից մինչեւ «Մահմետական եղբայրներ»):

Ուազմական ջիհադի հայեցակարգը Աֆղանստանում կյանքի կոչվեց նաեւ շնորհիվ պաղեստինցի մահմեդական տեսաբան Արդալլա Ազզամի, որը Զիդդայի Արդ ալ-Ազիզ թագավորի համալսարանում եղել էր Ուսամա բին Լադենի դասախոսը: Ազզամը աֆղանական պատերազմի համատեքստում առաջ էր քաշում այն թեզը, որ ինքնապաշտպանական ջիհադը յուրաքանչյուր մահմեդականի անհատական պարտականությունն է՝ ուղղված դար ալ-իսլամի (իսլամի աշխարհի) պաշտպանությանը: Բին Լադենի աշխարհայացքի եւ գաղափարախոսության ձեւավորման հարցում Ազզամը մեծ ազդեցություն է թողնում, որն անորոշ պարագաներում

սպանվում է 1989-ին: Աֆղանստանում ջիհադը դառնում է մարտնչող իսլամիզմի հիմնական շարժիչ ուժը, իսկ խորհրդային ներխուժման դեմ պայքարող արմատականները դառնում են ջիհադականների առաջն սերունդը:

1986-ից թիվ Լադենը Աֆղանստանի տարածքում ստեղծում է մարգական ճամբարներ: Յարստությունը, առատաձեռնությունն ու վարքագծի պարզությունը նրան մահմեդական արմատականների աչքում դարձնում են խարիզմատիկ: 1988-ին թիվ Լադենը աֆղանական ճամբարներում ռազմական պատրաստվածություն անցած մոջահինների տվյալների բազա է ստեղծում: Փաստորեն, տեղեկատվական քարտարանի շուրջ ձեւավորվում է այն կազմակերպչական կառույցը, որի արաբերեն անվանումն է *ալ-Ղաջիա, բառացի՝ բազա:*

1988թ. Աֆղանստանից ԽՍՀՄ գորքերի դուրսբերումից եւ մանավանդ «սառը» պատերազմի ավարտից հետո Աֆղանստանում գործող մոջահինների մարտական մի շարք կառույցներ, որոնց շռայլորեն ֆինանսավորում ու աջակցում էին Սաուդյան Արաբիան, Ծոնի միապետությունները, Պակիստանը եւ Վերջապես ԱՄՆ-ը (որին ձեռնտու էր մոջահինների հակախորհրդային ուղղվածությունը), դուրս եկան վերահսկողությունից՝ աստիճանաբար վերաճելով հակամերիկյան շրջանակների:

Արդեն 1991թ. հակախրայան կողալիցիայի գործողություններից հետո թիրապետող է դառնում հակամերիկյան դիրքորոշումը: 1990թ., Իրաքի կողմից քուվեյթի բռնագրավումից հետո, թիվ Լադենն իր աջակցությունն է առաջարկում իրաքյան սպառնալիքից անհանգստացած սառւդական ֆակտ բազավորին, սակայն վերջինս շտապում է դիմել ԱՄՆ-ին՝ թիվ Լադենի համար դառնալով ամերիկյան դրածո: Թիվ Լադենը սառւդական վարչակարգին մեղադրում էր ուխտադրժության մեջ, քանի որ նրանք տրամադրեցին «սրբազն» տարածքները ամերիկյան ռազմական բազաներին: 1991թ. ավարտին թիվ Լադենը ստիպված է լինում հեռանալ Սաուդյան Արաբիայից եւ հաստատել Սուլյանում, որտեղ նրան աջակցություն է ցույց տալիս երկրի նախագահ Յասան ար-Թուրաբին, որը հայտնի է որպես իսլամական արմատական տեսաբան: ԱՄՆ-ի դեմ առաջին ճակատը թիվ Լադենը բացում է Սոնալիում, որտեղ 1992թ. քաղաքացիական պատերազմից հետո հաստատվել էին միջազգային խաղաղապահ զորքեր, այդ թվում՝ ամերիկյան: 1993թ. հոկտեմբերին Մոգադիշոյում ահաբեկչության զոհ են դառնում 18 ամերիկացի զինվորներ: 1996թ. թիվ Լադենը, որը երկու տարի ատաջ զրկվել էր Սաուդյան Արաբիայի քաղաքացիությունից, ԱՄՆ ճնշման ներքո ստիպված է լինում թողնել նաեւ Սուլյանը եւ հեռանալ դեպի Աֆղանստան, որտեղ նրան ապաստան է

տալիս տալիքան շարժումը, որի կայացման հարցում բին Լադենը կարեւոր դերակատարություն էր ունեցել:

Ինչ-որ չափով հայտնելով մեկուսացման մեջ՝ նա ստիպված էր գործի դնել իր քարոզչական լծակները եւ մոբիլիզացնել արմատական ռեսուլուսը: 1997թ. օգոստոսի 23-ին բին Լադենը երկու սրբավայրերի երկիրը «բռնագավթած» ամերիկացիների դեմ ջիհաղի կոչ է անում: 1998-ի փետրվարին նա հիմնում է «Դրեաների եւ խաչակիրների դեմ միջազգային իսլամական ճակատը», որի հիմնադիրներից էր նաև Այնան ազ-Զավահիրին (Աերկայումս՝ բին Լադենի տեղակալը)` եգիպտական արմատականության ամենաակնառու գործիչներից մեկը: Շակատի հրապարակած ֆեթվայում վերստին հիշեցվում է յուրաքանչյուր մահմեդականի սրբազան պարտքի՝ ջիհաղի մասին: Մահմեդականներին կոչ է արվում ամենուրեք սպանել ամերիկացիներին՝ քաղաքացիական անձանց եւ զինվորականներին, ԱՄՆ աջակիցներին:

Ալ-Կահիդայի պատկերացմանը՝ ԱՄՆ-ը չարիքի եւ բռնության մարմնավորում է, իսլամական արժեքների թշնամի, որի քաղաքականությունը կործանարար է ողջ աշխարհի մահմեդականների համար: Սեպտեմբերի 11-ի ահարեկչությունից մեկ տարի անց, 2002թ. նոյեմբերին «Ամերիկային ուղղված նամակում» բին Լադենը յոթ կետով շարադրում է, թե ինչ են իրենք ուզում ԱՄՆ-ից: Դրանում նա մասնավորապես պահանջում է ԱՄՆ-ից՝ դադարեցնել աջակցությունը մահմեդական աշխարհի կոռումպացված առաջնորդներին, չմիջամտել իսլամի կրթության սկզբունքին, մահմեդականների հետ հարաբերություններում առաջնորդվել ոչ թե հպատակեցման, այլ փոխադարձ հետաքրքրությունների եւ շահերի սկզբունքով: «Մեզ միայնակ թողեք, կամ էլ սպասեք մեզ և յու Յորբում եւ Վաշինգտոնում», – նշված է տեքստում:

Բին Լադենը փորձել է կերտել իր կերպարը իսլամի մարգարեի համանանությամբ եւ իր դեգերումները նույնացրել 622թ. մարգարեի հիջրայի՝ հեթանոս Մեքքայից Մեդինա փախուստի հետ: Բացի այդ, ինչպես նորադարձ մահմեդականները կարողացան հաղթանակներ տանել Սասանյան եւ Բյուզանդական կայսրությունների դեմ, այնպես էլ իսլամականները պետք է կործանեն ամերիկյան կայսրությունը:

Ալ-Կահիդայի գաղափարախոսությունը, ընդհանուր առմամբ, որեւէ նոր բան չի ավելացնում ավանդական սալաֆականությանը: Ալ-Կահիդայի գաղափարախոսության հիմքում ռազմական ջիհաղի հայեցակարգն է, որը իսլամի աշխարհի եւ իսլամական արժեքների պաշտպանությունը դիտարկում է իբրեւ յուրաքանչյուր մահմեդականի սրբազան պարտք: Ալ-Կահիդան եւ ժամանակակից իսլամական ահարեկչությունը որեւէ տարբերություն չեն տեսնում պաղեստինցիների դեմ իսրայելցիների գործած բռնու-

թյունների, 1970-ականների վերջին Աֆղանստանում խորհրդային զորքերի ներխուժման, 1990-ականների սկզբին Պարսից ծոցի, չեչենական պատերազմի կամ էլ 2003թ. Իրաքի գրավման միջեւ: Մահմեդական բնակչություն ունեցող երկրի դեմ ցանկացած ռազմական գործողություն դիտարկվում է որպես ազրեսիա իւլամի աշխարհի դեմ. հետեւաբար՝ արտաքին ուժին հակազդող ահաբեկչական գործողություններն արդարացված են: Խաղաղ գոյակցությունը Արեւմուտքի հետ համարվում է վտանգավոր պատրաճը:

Ալ-Կահիդայի հաջորդ թիրախը ներքին թշնամիներն են: Դրանք այն մահմեդականներն են, որոնք, իսլամական արմատականների տեսանկյունից, խախտել են իսլամի սկզբունքները: Ահաբեկիչները ջիհադ են հայտարարել նաև նրանց: Ներքին խնդիրները հիմնականում ներառում են իսլամական երկրներում աշխարհիկ վարչակարգերի վերացումն ու իսլամական տիպի պետությունների ստեղծումը, քանի որ շարհաթք միայն աստվածապետության կողմնակից է: Նրանց կարծիքով՝ աշխարհիկ քաղաքականությունը հանգեցնում է իսլամական արժեքների անկմանը: Ուխտադրուժ վարչակարգերի դեկավարները շատ դեպքերում մեղադրվում են կոռումպացվածության, հավատուրացության եւ Արեւմուտքի հետ համագործակցելու մեջ: Քննադատության թիրախ կարող են դառնալ նաև ոչ աշխարհիկ վարչակարգերը՝ իսլամական իդեալներն իրականացնել չկարողանալու համար:

Ընդհանուր առնամբ, ալ-Կահիդայի կառուցվածքի մասին շատ բան հայտնի չէ: Սակայն առկա տեղեկությունների համաձայն՝ այն աչքի է ընկնում ապակենտրոն բնույթով եւ ճկունությամբ, որ ունակ է վերակազմավորման եւ լայնամասշտար գործողությունների: Ալ-Կահիդայի շրջանակներում գործում են բազմաթիվ կառույցներ, որոնք շատ դեպքերում աչքի են ընկնում ինքնուրույն գործելակերպով: Ալ-Կահիդան գործում է աշխարհագրական տարբեր արեալներում, ընդգրկում է իսլամական էթնոդավանական տարբեր խմբեր, ինչը հաճախ կազմակերպության ներսում հակասություններ է ստեղծում:

Ալ-Կահիդայի կենտրոնական տարբեր նրա առաջնորդն է՝ էնիր Ուսանաբին Լաղենը: Ալ-Կահիդան դեկավարվում է իսլամական խորհրդակցական մարմնի՝ Շուրայի խորհրդի կողմից, որը, արեւմտյան աղբյուրների համաձայն, կազմված է 20-30 ազդեցիկ եւ ավագ սերնդի անդամներից: Կազմակերպության ներսում գործում են հանձնաժողովներ՝ կրոնի, ռազմական, ֆինանսական, հասարակության հետ կապի, իրավական հարցերով զբաղվող եւ այլն: Ուղարկում գործում է ահաբեկչության գծով միջազգային մասնագետը, ալ-Կահիդային նվիրված մենագրության մեջ նշում է, որ կազմակերպության միջուկը 500 մարդ է, սակայն նրա հետ

կապ ունեցողները հազարավորներ են: Ուազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի 2004թ. տվյալներով՝ ալ-Կախդան 60 երկրում ցրված ավելի քան 18000 հավանական գրոհայիններ ունի, որոնք ունակ են օպերատիվ աշխատանքի:

Վերջին շրջանում ալ-Կախդայի ենթակառույցները զգալի հարված կրեցին՝ նրա տեսաբան Ռամզի Բինալշիրի, շտաբի պետ Խալիդ շեյխ Մուհամմադի (վերջինիս գլխավորությամբ ալ-Կախդայի օպերատիվ խումբը կարողացավ կազմակերպել սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը), բին Լաղենի տեղակալ Ֆարազ ալ-Լիրիի ծերբակալությունից հետո: Ալ-Կախդայի շտաբի նախկին պետը՝ Մուհամմադ Արեֆը, սպանվեց Աֆղանստանում 2001թ. հակաահաբեկչական գործողությունների ժամանակ: Սակայն կառույցը դեռևս կենսունակ է եւ հայտարարել է, թե այսուհետ եւս գործելու է ԱՄՆ հետաքրքրությունների դեմ ողջ աշխարհում:

Ալ-Կախդան բացարիկ ուշադրություն է դարձնում իր գրոհայինների գաղափարական եւ հոգեբանական պատրաստվածությամբ, ինչը հեշտացնում է անձնասպանական գործողությունները: Նրա կազմակերպած ահաբեկչական գործողությունները, ընդհանուր առմանք, տեղի են ունենում մանրակրկիտ նախապատրաստությունից հետո, որ կարող է տեսել կես տարուց ավելի: Ալ-Կախդան հաջողությամբ ներդրել է հավաքագրման մի համակարգ, որ գործում է գրեթե բոլոր նահմեղական երկրներում՝ այդ նպատակների համար օգտագործելով բարեգործական կազմակերպություններն ու մզկիթները: Զնայած նա հանդես է գալիս գլոբալիզացիայի դեմ, սակայն լայնորեն օգտագործում է քաղաքակրթական դաշտի տեխնոլոգիական ձեռքբերումները:

Մինչեւ սեպտեմբերի 11-ը ալ-Կախդան ահաբեկչների մի խումբ էր, որոնք իրենց անվանում էին Եղբայրներ եւ համեմատվում անսարմներ՝ Մուհամմադ մարգարեի հավատարիմ, ոչ ստվարաթիվ զինակիցների հետ, որ պատրաստ էին զոհաբերել իրենց՝ հանուն ճշմարիտ հավատքի: Պատահական չէ, որ սեպտեմբերի 11-ին մասնակցած 19 մահապարտները մկրտվել էին անսարմների անուններով:

2001-ից հետո համաշխարհային ահաբեկչությունը ալ-Կախդայի ազդեցությամբ եական փոփոխությունների ենթարկվեց: Ալ-Կախդան կազմակերպությունից վերաճեց շարժման: 2003-ի Իրաքյան պատերազմից հետո համաշխարհային ահաբեկչության կենտրոն դարձավ Իրաքը: Ասիական, աֆրիկյան, մերձավորարեւելյան մի շարք ջիհադական կառույցներ ու կազմակերպություններ սկսեցին գործել ալ-Կախդայի նմանությամբ՝ ընդօրինակելով նրա վարքագիծը: Այդ խմբերը, անկախ ալ-Կախդայի հետ կապ ունենալուց, նույնական զգալի վտանգ են ներկայացնում ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների համար: Նրանց գործողությունները, չնայած թելա-

դրված չեն ալ-Կահիդայի կողմից, սակայն ներշնչված են նրա գաղափարախոսությամբ եւ հաճախ օգտվում են վերջինիս մարտավարությունից: Ասվածի ապացույցն է Սալաֆիյա Զիհադիյան՝ մարոկոյական շարժումը, որ պատասխանատու է 2003թ. մայիսին Կասաբլանկայուն տեղի ունեցած պայթյունների համար. նույնը կարելի է ասել 2004թ. մարտին Մադրիդի ահաբեկչության կազմակերպիչների մասին:

Փաստորեն, ալ-Կահիդային հաջողվել է իր գաղափարախոսական ազդեցությունը տարածել տարբեր աշխարհաքաղաքական գոտիներում՝ Մերձավոր եւ Միջին Արեւելքում, Կովկասում, Եվրոպայում, Հարավարեւելյան Ասիայում, Հեռավոր Արեւելքում՝ միջամտելով մահմեդականներին առնչվող հակամարտություններին: Ընդհանուր առնամբ, ալ-Կահիդան վիրխարի աշխատանք է ծավալել նոր իսլամական արմատական կառույցների ստեղծման եւ եղածներից շատերն արնատականացնելու ուղղությամբ:

Փաստորեն, մինչեւ ալ-Կահիդայի հիմնադրումը ահաբեկչական կազմակերպությունների գործողություններն, ընդիհանուր առնամբ, ուղղված էին որեւէ երկրի կամ երկրների ոչ մեծ խմբի դեմ, մինչդեռ ալ-Կահիդան, կարողանալով լավագույնս օգտագործել մահմեդականության արմատական ռեսուրսը (որի կորիզը արար «աֆղանցիներն» էին)՝ դիմեց ռազմական ջիհադի հայեցակարգին: Ալ-Կահիդան ապացուցեց, որ իր միջոցներով հավասարապես կարող է պայքարել առաջատար պետությունների ռազմական, քաղաքական, ֆինանսական եւ գաղափարական ուժի դեմ: Միեւնույն ժամանակ, ալ-Կահիդան պահիվանական տիպի կազմակերպություն է, որի վերջնական նպատակը համախևանական թեոկրատ պետության՝ խալիֆայության ստեղծումն է:

Վերջերս ալ-Կահիդայի ինտերնետային կայքում տեղեկատվություն տարածվեց այն մասին, թե թին Լադենը մահացել է, ինչն արժանահավատ չի թվում: Յանի աս-Սիրային՝ լոնդոնյան ալ-Մաքրիզի կենտրոնի տնօրենը, այն կարծիքը հայտնեց, որ «Եթե Ուսանա թին Լադենը մահանա, ապա նրան կփոխարինի Այման ազ-Զավահիրին: Իսկ եգիպտացի արմատական գործիչ Յասիր աս-Սիրիին՝ Լոնդոնում հիմնված «Ալ-Մարսադ ալ-Խսլամի» ինտերնետային կայքի տնօրենը, «աշ-Շարկ ալ-Աուսատ» թերթին տված հարցազրույցում ընդգծեց, որ նման տեղեկատվությունը նպատակ ունի մահմեդականներին ասել. «Թող ձեզանից յուրաքանչյուրը պատրաստ լինի փոխարինել նրան...»:

## ՆՈՐ ՄԵՐԶՎԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

### Ե. Սատանովսկի

Մերձավոր եւ Միջին Արեւելքի զարգացման հեռանկարներն, ինչպես երբեք, մշուշոտ են:

Արտաքին ուժեղի մասնակցությունն այս տարածաշրջանը ծվատող ոչ մի հակամարտություն էլ չի լուծել: Լավագույն դեպքում դրանք «քշվել են խորքը» եւ արտաքին ճնշման վերացումից հետո՝ ցանկացած պահի կարող են բռնկվել: Սա հավասարապես վերաբերում է լարվածության եւ մեծ, եւ փոքր օջախներին, անկախ նրանից՝ դրանք դարավոր վաղեմության դիմակայությունների<sup>8</sup>, թե՝ ոչ հեռավոր անցյալի բախումների արդյունք են: ՄԱԿ խաղաղարար գործունեությունը Մերձավոր Արեւելքուն նույնքան ձախողված է, որքան Աֆրիկայում, իսկ «իսլամական» կամ «միջարաբական» նախաձեռնությունները հաջողություն են բերում միայն անմիջական երկարատեւ օկուպացիայի տեսքով: Վերջինս արդարացի է նաեւ արեւմտյան տերությունների համար՝ չնայած քաղաքական գործիչների եւ լրատվամիջոցների ճարտասանությանը, որն ուղեկցում է ամերիկյան ծովային հետեւակայինների կամ ֆրանսիական արտասահմանյան լեգեոնի գործողություններին:

Արեւելյան քրիստոնեության եւ իսլամի դիմակայությունը 21-րդ հարյուրամյակի սկզբում վերջնականապես լուծվեց հօգուտ իսլամի: Տարածաշրջանի քրիստոնյա բնակչությունը սրբնթաց նվազում է, այդ թվում՝ նաեւ այնտեղ, որտեղ ունեւոր քրիստոնյա համայնքները՝ որպես հակակշիռ լումպենացված եւ ընդդիմադիր իսլամական քաղաքային ծայրամասերին, մինչեւ վերջերս աջակցություն էին ստանում տեղական դիկտատորների կողմից: Մերձավոր եւ Միջին Արեւելքի ներկա ժողովրդավարացունը նշանակում է ոչ թե փոքրանասնության իրավունքների հարգում, այլ նրանց վտարում կամ ոչնչացում: Դա հավասարապես վերաբերում է Եօհպտոսի, Իրաքի, Լիբանանի եւ Սուդանի քրիստոնյաներին: Իրանի ու Միջինի համայնքները համեմատարար անվտանգ պայմաններում են ապրում, քանի դեռ այդ երկրներում իշխանության դեկին են նույն կառավարող վարչակարգերը: Ինչ վերաբերում է Խարայելի եւ Պաղեստինի քրիստոնյաներին, ապա, ինչպես ցույց է տալիս նախորդ տասնամյակի փորձը, այն պահից, ինչ տարվում է «պաղեստինյան ազգային օջախի կառուցումը», նրանց ապագան կախված է հետեւյալից՝ պաշտպանո՞ւմ է, արդյոք, իրեական պետությունը նրանց իրավունք-

ները,թե՝ իրենք թողնված են զինված իսլամիստների քմահաճությանը:

Ստրկությունը, որն արմատախիլ անելու մասին անցած դարի 60-ականներից տարփողում էին միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները, տարածաշրջանում գոյություն ունի ոչ միայն թաքնված, այլև դասական ձեւերով: Մավրիտանիան ու Սուլդանը լոկ առավել ճանաչված այն պետություններից են, որոնց տարածքում ծաղկում է համաշխարհային ընկերակցության կողմից «չնկատվող» ստրկավաճառությունը:

Քաղաքական իսլամիզմը՝ որպես հայդուկային կոհիվների եւ ահաբեկչության տեսքով իշխանություններին դիմակայելու առավել գործուն միջոց, դարձավ տարածաշրջանում ընդհանուր արմատավորում գտած երեւություն: Ալժիրում ու Եգիպտոսում բանակի ողջ ուժերի լարման եւ ժողովրդավարության կոշտ սահմանափակման գնով իսլամիստները հեռացվեցին իշխանությունից, սակայն ոչ մի երաշխիք չկա, թե դա առհավետ է՝ առավել եւս, որ իսլամիզմը տարածում է գտնում հարեւան երկրներում: Ճրեական համայնքային շենքերի ու արտասահմանցիների ոչնչացումը Մարոկոյում, որը տասնամյակներ շարունակ հանդիսանում էր ուլեմների եւ միապետության համագործակցության գոտի, լուրջ ահազանգ է՝ նույնիսկ Արեւմտյան Սահարայի լրացուցիչ կոնֆլիկտային ներուժը հաշվի չառնելու դեպքում, որի կարգավորումը նույնքան հեռու է, որքան քառորդ դար առաջ էր, երբ առաջին անգամ ծագեց հիմնախնդիրը:

Ալժիրը եւ Մարոկոն ոչ միայն ծերացող Եվրոպան լցնող միլիոնավոր ներգաղթյալների, այլև միջազգային, այդ թվում՝ ահաբեկչական կառույցների հետ սերտորեն կապված Եվրոպական նոր քաղաքական իսլամի հայրենիք են: Նրանց առաջնորդները հաջողությամբ հենվեցին մաղրիբյան զանգվածի վրա, իսկ երբ երկարուղային կայարաններում իրականացված ահաբեկչական գործողությունների (2004թ. մարտի 11-ի մաղրիբյան պայթյունները) ընթացքում վիրձության ենթարկվեց Եվրոպական քաղաքական համակարգը, հմտորեն օգտագործեցին Եվրամիության ազատական համակարգի ճեղքվածքները: Ահաբեկիչների դեմ իսպանական կառավարության անձնատուրության ֆոնի վրա՝ թույլ սփոփանք է արաբաբերբերական հակամարտության պարտի հավանականությունը, որը նշնարվեց այն բանից հետո, երբ ալժիրյան իշխանությունները, որոնք շուրջ 10 տարի քաղաքացիական պատերազմ էին մղում երկու ճակատով (իսլամիստների ու բերբերների դեմ), բերբերներին ընդառաջ խորհրդանշական քայլ կատարեցին:

Տարածաշրջանի մեծագույն հիմնախնդիրն իշխանության փոխանցման մեխանիզմի անկատարելությունն է, ինչը խարխլում է կառավարող վարչակարգերի կայունությունը: «Պարադոքսային կերպով՝ «հանրապետական միապետությունը» (Սիրիայի կամ Աղրբեջանի օրինակով,

ժողովրդավարական միջավայրի օգտագործմամբ՝ կառավարող ընտանիքի շրջանակներում գերագույն իշխանության փոխանցումը) կարող է Մերձավոր եւ Միջին Արեւելքի համար վերնախավային խռովությունների, քաղաքացիական պատերազմի կամ իսլամական հեղափոխության այլընտրանք հանդիսանալ: Լիրիայի ու Եգիպտոսի երկարակյաց տիրակալների համար ժառանգորդներին իշխանության օրինական փոխանցման խնդիրն ամենազիստավորներից է: Դարցերի հարցն է՝ կպահե՞ն, արդյոք, իշխանությունը ժառանգորդները:

Տարածաշրջանի առանցքային երկիր է հանդիսանում Եգիպտոսը, որտեղ անշեղորեն աճում է բնակչությունը եւ որն ունի վարչակարգի հետ զինված պայքարի փորձ ունեցող ամենահին իսլամիստական ընդդիմությունը: Բացառված չէ, որ բնակչության 100 մլն-ի սահմանագծին հասնելու դեպքում՝ տնտեսության եւ բնապահպանության վրա ժողովրդագրական ճնշումը չափազանց ուժեղ կլինի, ինչը երկրին կստիպի անցնել արտաքին էքսպանսիայի, որպեսզի կանխի ալֆիրյան տիպի քաղաքացիական պատերազմը: Այս դեպքում ավելի հավանական է սուլանյան ուղղությունը, առավել եւս, որ մոտակա 10-15 տարիներին Սուլդանը, ինարավոր է, դադարի լինել միասնական պետություն՝ մասնատվելով (հանրաքվեի միջոցով կամ առանց դրա) իսլամական հյուսիսի եւ քրիստոնյա-անիմիստական հարավի: Սուլդանա-Եգիպտական դաշինքը, որն ունի վաղեմի պատմական արմատներ, սպառնում է հեռանկարում Խսրայելի համար դաշնալ առավել վտանգավոր հարեւան: Բացառված չէ, որ նրա հետ ընդհարունը դաշինքի ապագա առաջնորդներն արդարացված համարեն ինչպես գաղափարաբանական, այնպես էլ՝ ներքաղաքական տեսանկյունից:

Եթե «աֆղանական արաբների» իսլամիստ առաջնորդներին հաջողվի տապալել Սաուդյան Արաբիայի իշխող դինաստիան, ապա կա այդ թագավորության եւ սուլդանա-Եգիպտական դաշինքի միավորման իսլամականություն: «Նոր Խալիֆաթը», որն, ամենայն իսլամականությանը, կառաջանա նշված միության հիմքի վրա, տնտեսական, ռազմական, ժողովրդագրական եւ աշխարհաքաղաքական առումներով ի զորու կլինի մարտահրավեր նետել Արեւմուտքին: Նման տիպի միության եւ Խսրայելի միջեւ բախումը գործնականում անխուսափելի է: Առավել եւս, որ Խսրայելի հարեւանների համար նրա միջուկային գենքի՝ որպես զայիչ գործոնի կարեւորությունը նվազում է, քանզի արաբական երկրները համոզված են, որ Արեւմուտքը թույլ չի տա այն կիրառել նույնիսկ իբրեւ «վերջին հարվածի գենք»:

Ինչպիսի՞ն են այլընտրանքային սցենարներն Արաբական թերակղզու համար՝ իսլամիստների հաղթանակի պարագայում. կառուցվածքով կամ իրանական այթուանների (քիչ իսլամական սցենար), կամ աֆղանական

թալիբների (առավել հավանական սցենար) վարչակարգերին մոտիկ կարգերի հաստատում: Այս դեպքերից յուրաքանչյուրում իրադարձությունների հետագա զարգացումը կախված է նրանից՝ կմիջամտի՝, արդյոք, Արեւմուտքը, թե՞ ոչ: Իրանական տիպի սումնիական իսլամական պետությունը հնարավորություն կունենա երկար ժամանակ «խաղալ» արեւմտյան առաջատար տերությունների միջեւ առկա տարածայնությունների վրա՝ մինչեւ «Նոր Խալիֆաթի» աստիճանական էվոլյուցիայի պահը, եթե նրա գլուխ ի սկզբանե չկանգնի Ռւսանա բեն Լաղենի ննան անձնավորություն: Վերջինիս դեպքում մեծ է ամերիկյան ռազմական գործողությունների հավանականությունը (հնարավոր է՝ ՆԱՏՕ շրջանակներում) եւ Սաուդյան Արաբիայի ներկայիս տարածքի մասնատումը: Ենթադրելի են բաժանման հետեւյալ գոտիները. Դիշագ նահանգը՝ իր սրբավայրերով (ԱՄՆ արաբ դաշնակիցների, օրինակ, հորդանանյան դինաստիայի վերահսկողության տակ), Արեւելյան նահանգը՝ իր նավթով, Ենենյան Ասիրն ու վահարական Նեցորը: Բացառված չէ, որ փաստացի էքնոդավանական սկզբունքով գոտիների բաժանմանը՝ Իրաքի կառավարման փորձն այստեղ ամերիկացիների համար որոշիչ լինի:

Պարսից ծոցի գոտու փոքր միապետությունների ճակատագիրը մեծապես կախված է տվյալ տարածաշրջանում ԱՄՆ ու Մեծ Բրիտանիայի դիրքերի ամրությունից: Այս միապետությունները, բացառությամբ Օմանի Սուլթանության, սեփական ուժերով իսլամիստներին դիմակայել չեն կարող:

Եմենը գենքով գերիագեցած է, կենտրոնական իշխանությունն այստեղ թույլ է, նիեւնույն ժամանակ, մոտակա 10 տարիներին հնարավոր է ջրային ճգնաժամ, ինչը հավասարազոր է բնապահպանական աղետի: Նման իրավիճակում մեծ է Սաուդյան Արաբիայի հետ նրա ընդհարման հավանականությունը: Այս հականարտությունից դուրս Եմենի հիմնախնդիրների լուծման հեռանկարներն ամենենին էլ պարզ չեն, իսկ բախումը կիանգեցնի ոչ պակաս կործանարար հետեւանքների, քան 1990թ. Իրաքի կողմից քուվեյթի գրավումն էր:

Եմենի՝ Բաք էլ Մանդերի նեղուցի մյուս ափի հարեւաններ Սոմալին, Երիթրեան ու Զիբութին երկար ժամանակով ներգրավված կլինեն նախկին երովայիական կայսրության անկումին գուգընթաց՝ սահմանային ընդհարումներով, միջկրոնական եւ միջցեղային կոտորածներով, հանաճարակներով եւ զանգվածային սովոր ուղեկցվող գործընթացներում: Իրադրությունն Աֆրիկյան եղջյուրում ավելի կրադանա Սուլդանի վերոհիշյալ հնարավոր քայլայմանը եւ, քաղաքագետ-աֆրիկագետների կարծիքով՝ սպասվող առաջին մայրցանաքային գերպատերազմով, որում ներքաշված կլինեն Սահելի (Սահարա անապատից մինչեւ Արեւմտյան Աֆրիկայի

տափաստաններն ընկած գոտին - խմբ.) ու Մեծ լճերի ավազանի շատ երկրներ:

Տարածաշրջանի արեւելքում գտնվող Աֆղանստանը շարունակում է մնալ մի տարածք, որը մասնակիորեն վերահսկում են ՆԱՏՕ օկուպացիոն զորքերը: Այն ոչ չի կառավարում (ինչի մասին է վկայում թմրանյութերի տեղական արտադրության աճը) եւ մասամբ գտնվում է բալիբների հսկողության տակ, որոնց ջախջախման մասշտաբներն արեւմտյան լրատվամիջոցները խիստ չափազանցում են: Այս տարածքում ծավալվող իրադարձությունները Պակիստանի կայունության համար մահացու Վտանգ են ներկայացնում: Վերջինիս փլուզումը հեռանկարում չի բացառվում՝ հատկապես աֆղանական անցքերում նրա ներգրավածության պատճառով: Սահմանամերձ շրջանների իրավիճակի վրա կենտրոնական կառավարության հսկողության կորուստը (այն էլ սեփական միջուկային գենքի ու միջուկային տեխնոլոգիաների, ինչպես եւ պակիստանյան վերնախավի բոլոր մակարդակներում միջազգային ահարեւէչական կազմակերպությունների հետ կապեր ունեցող ազդեցիկ իսլամիստական լոբբիի առկայության պայմաններում) այսօր փաստ է:

Իրանը, որ մոտ է սեփական միջուկային ծրագրի՝ ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական տեսանկյունից իրականացմանը, ԱՄՆ համար մնում է որպես «չարիքի առանցքի» կենտրոնական օղակ: Դեղափոխական հանրապետությունը, ինչպես նի քանի տասնամյակներ առաջ ԽՍՀՄ-ը, էվոլյուցիա է ապրում եւ նպաստում է տարածաշրջանային կայունությանը՝ չմասնակցելով հակամարտություններից շատերին կամ նրանցում խաղալով կառուցողական դեր: Արեւմուտքի, առաջին հերթին՝ ԱՄՆ ու Խրայելի հետ Իրանի դիմակայությունը սպառնում է անդառնալիորեն ապակյունացնել իրադրությունը Մերձավոր եւ Միջին Արեւելքում, այդ թվում՝ Մերձկասպիայում եւ Պարսից ծոցի գոտում: Ինչպես երեւում է, ԱՄՆ-ը ջանում է խուսափել Իրանի հետ ուղղակի առճակատումից, սակայն հնարավոր ամեն բան անում է նրա բախումն Խրայելի հետ իրահրելու համար՝ վերջինիս դրդելով իրանական միջուկային օբյեկտների վրա գրոհելու: Իրադարձությունների զարգացման ննան տարբերակը չի բացառվում՝ լիբանանյան շիաների հակախրայելական ահարեւէչական գործունեության աշխուժացման ու նաեւ այն պատճառով, որ հրեական բնակավայրերի տարիանմանը հասարակության աննախադեպ դիմադրման պայմաններում՝ Խրայելի դեկավարությանն անհրաժեշտ է «փոքր հաղթական պատերազմ»:

Իրաքը երկար ժամանակ կհանդիսանա «բոլորին՝ բոլորի դեմ» քաղաքացիական պատերազմի գոտի՝ ողջ աշխարհի իսլամիստների եռանդուն մասնակցությամբ, որոնց համար նրա տարածքը դարձել է զիհաղի

փորձարկման մարտադաշտ: Անցկացված խորհրդարանական ընտրությունները նվազագույն իսկ չափով ընդունակ չեն բավարարել ո՞չ սումնիներին, որոնք նախկին վարչակարգի ժամանակ կազմում էին քաղաքացիական վարչակազմի, բանակի ու ոստիկանության կորիգը եւ քվեարկություններին գործնականում չմասնակցեցին, ո՞չ էլ այսօր ակտիվ արտագաղթող քրիստոնյաներին: Իրաքի մասնատումը խիստ հավանական է, եւ այդ դեպքում օրակարգում կլինի ոչ միայն տարածաշրջանում առաջին շիական-արաբական, այլև քրդական պետության առաջցումը: Վերջինիս դեպքում կիրագործվի դեռևս Ազգերի լիգայի տված խոստումը, սակայն, դրա հետ մեկտեղ, կաճի Թուրքիայի փլուզման հավանականությունը. չէ՞ որ այդ երկրի արագ ավելացող քուրդ բնակչությունն ունի զինված անջատողականության հին ավանդույթներ:

Այս վտանգը բուրք-ամերիկյան հարաբերություններում առաջացրեց սառնություն, երբ Թուրքիայի կառավարությունն իր գլխավոր դաշնակցին մերժեց Սադամ Ռուսեյնի վրա հարձակվելու համար երկրի տարածքի օգտագործումը՝ վերջին հաշվով կորցնելով մի քանի մլրդ դոլար եւ ԱՄՆ հետ հարաբերությունների գգալի մասը: Միացյալ Նահանգներից հեռանալու դեպքում, Հյուսիսային Կիպրոսի խնդրի ապաշրջափակման պայմանով՝ Թուրքիայի նախատեսվող «ներխուժումը» Եվրոպա կարող է ինչպես Եվրամիության «նաղրիբացման», այնպես էլ՝ քեմալական Թուրքիայի իսլամացման հաջող այլընտրանք լինել:

Նախկին վարչապետ Ռաֆիկ Ջարիրի սպանությունից հետո Լիբանանում առաջացած ճգնաժամը ոչ միայն կիանգեցնի այնտեղից սիրիական զորքերի դուրսերմանը, այլև, ամենայն հավանականությամբ, քաղաքացիական պատերազմի նոր ալիք կիրակրի երկրում, որտեղ տասնամյակներ շարունակ միայն օտարերկրյա գորակազմերն էին կարողանում նվազեցնել լիբանանյան հասարակությունը քանդող էքնոդավանական զինված խնբավորումների դիմադրության աստիճանը:

Չնայած բոլոր ջանքերին, բացառված չէ, որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադին չհաջողվի երկրում իշխանությունը պահել իր ձեռքում: Լիբանանի վրա հսկողությունը կորցնելուց հետո դրան կարող են նպաստել ինչպես Սիրիայի կուսակցական-պետական վերնախավը, որի վրա ներկայիս սիրիական առաջնորդի իշխանությունը գգալիորեն թույլ է, քան նրա հոր օրոք էր, այնպես էլ՝ Միացյալ Նահանգները, որը ձգտում է Սիրիայի ջախջախումով ավարտել իրաքյան «մեծագործությունների» պատճությունը: Արդյունքում՝ Սիրիան կվերադառնա մինչասադյան վերնախավային խռովությունների եւ լատինաամերիկյան տիպի խունտաների վիճակին՝ տարածաշրջանում չխաղալով որեւէ նշանակալից դեր:

Յասիր Արաֆաթի մահը բուլացրեց իսրայելա-պաղեստինյան հակա-

սուբյունների հանգույցը: Պարզ չէ, թե նրա փոխանորդ Մահմուտ Աբասին որքանով կհաջողվի հսկողության տակ վերցնել ռազմականացված կազմավորումները եւ տեղական ինքնակառավարման մակարդակներում, առաջին հերթին՝ Գազայի հատվածում գերակշռություն ունեցող իսլամիստների հետ դիմակայության պայմաններում պահել իշխանությունը: Բացառված չէ, որ մոտ ապագայում Պաղեստինում քաղաքացիական պատերազմ բռնկվի, եւ որ երկիրը կարող է վերածվել տեղական առաջնորդներին ենթարկվող անկլավի, որոնք ինքնուրույն կերպով կկառուցեն հարաբերությունները Յորդանանի, Եգիպտոսի ու Իսրայելի հետ:

Յրեական բնակավայրերի տարիանման հարցը պառակտեց իսրայելական հասարակությունը: Վարչապետ Արիել Շարոնը, հոգալով սեփական միջազգային վարկանիշի, որով՝ քաղաքական ասպարեզից հեռանալու դեպքում իր ընտանիքի անվտանգության ապահովման մասին, երկիրը հասցրեց «նարնջագույն հեղափոխության» շեմին: Շարոնի գործողությունները ցույց տվեցին, որ իր ժողովրդավարությամբ հպարտացող Իսրայելում կլանային ավտորիտարիզմի ավանդույթները հարեւան արաբական երկրներից (որոնք իսրայելցիները համարում են բռնապետություններ) թույլ չեն: Ստեղծված իրավիճակը կարող է իսրայելական այդշափ քաղաքականացված հասարակությանը հասցնել քաղաքացիական դիմակայության շեմին կամ ներքաղաքական համակարգում բերել անշրջելի փոփոխություններ: Փորձագետներն առաջ են քաշում մոտ հեռանկարում Իսրայելի՝ նախագահական կառավարման ձեւին անցման, քաղաքական ասպարեզում բանակի ակտիվացման եւ «ազգային համաձայնության» շրջանակներից իսրայելցի արաբների դուրսմղման հնարավորությունը, որոնց «պաղեստինացումը» անցած դարի 90-ականներին արդեն իրողություն էր դարձել:

Ընդհանուր առմանք, Մերձավոր եւ Միջին Արևելքում մոտ ապագայում սպասվում են հականարտությունների հին օջախների բորբոքում եւ նորերի առաջացում, ԱՄՆ գերակայություն՝ Եվրամիության ու առավելապես Չինաստանի հետ մրցակցությունում, ինչպես նաև սահմանների գոյություն ունեցող համակարգի խորտակում եւ անկայունության աճ, այդ թվում՝ տարածաշրջանից դուրս՝ սեպտեմբերի 11-ի մոդելով: Նոր Մերձավոր Արևելքի հեռանկարը տիսուր է, բայց իրական:

«Россия в глобальной политике»,  
ապրիլ, 2005թ.

*Շապիկի վրա պատկերված է  
տեսարան Սիսիանից (Այունիքի մարզ)*

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երևան, 375010, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթ՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակ՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ O1U 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում:

## **Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>Գագիկ Տերտերյան</b> ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՍԹԱՑՆԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	1
<b>Սարգիս Հարությունյան</b> ԱԴՐԲԵՋԱՆԸ ԽՈՐՃՐԴՎԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ	4
<b>Կարեն Վերանյան</b> ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ	11
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b> ԿՐՈՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	16
<b>Սեւակ Սարուխանյան</b> ԻՄՐԱՅԵԼԻ ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ	19
<b>Արտակ Շաքարյան</b> ԹՈՒՐՖ-ԻՄՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	23
<b>Արաքս Փաշայան</b> ԱԼ-ԿԱԻՂԱՆ՝ ԶԻՐԱԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	28
<b>Ե. Սատանովսկի</b> ՆՈՐ ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ	34